ԱՄԵՆԱՄՍՅԱ ՏԵՂԵԿԱԳԻՐ ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

BADASYAN CONSULTING

ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ

«Եվրասիական տնտեսական միության և դրա անդամ պետությունների՝ մի կողմից, և Ինդոնեզիայի Հանրապետության՝ մյուս կողմից, միջև ազատ առևտրի մասին» համաձայնագիրը վավերացնելու մասին» ՀՕ-457-Ն ՀՀ օրենք (ընդունված՝ 14.09.2026 թ., ուժի մեջ՝ 19.09.2026 թ.):

- Օրենքով վավերացված համաձայնագիրը նպատակ ունի ազատականացնել ԵԱՏՄ անդամ պետությունների, այդ թվում՝ Հայաստանի, և Ինդոնեզիայի միջև առևտուրը՝ նվազեցնելով առևտրային խոչընդոտները և խթանելով տնտեսական համագործակցությունը:
- Համաձայնագրով նախատեսվում է կողմերի միջև ապրանքների առևտրի նկատմամբ ներմուծման մաքսատուրքերի աստիճանական նվազեցում կամ վերացում՝ համաձայն ապրանքային խմբերի համար սահմանված սակագնային պարտավորությունների ժամանակացույցների: Արտոնյալ մաքսատուրքերի կիրառումը պայմանավորված է ապրանքների ծագման կանոնների պահպանմամբ: Մասնավորապես, նախատեսվում են ապրանքների ծագումը հաստատելու պահանջներ, այդ թվում՝ ծագման հավաստագրի կամ հայտարարագրի ներկայացում:
- Միաժամանակ, համաձայնագրով կարգավորվում են մաքսային ընթացակարգերի և առևտրի դյուրացման, տեխնիկական խոչընդոտների, սանիտարական և բուսասանիտարական միջոցների, առևտրի պաշտպանական միջոցների և կողմերի միջև համագործակցության հետ կապված հարաբերությունները: Համաձայնագրի կիրառումը կարող է նպաստել Հայաստանի և Ինդոնեզիայի միջև ապրանքաշրջանառության ընդլայնմանը և արտահանման ու ներմուծման ծախսերի նվազեցմանը:

ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՈՒՄՆԵՐ ԵՎ ԱՅԼ ԵՆԹԱՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ԱԿՏԵՐ

Կառավարության 2020 թվականի դեկտեմբերի 3-ի N 1976-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին N 1313-Ն (ընդունվել է՝ 03.09.2026թ., ուժի մեջ՝ 04.09.2026թ.)

- Որոշմամբ հաստատվել է այն տեղեկատվության (տվյալների) ցանկը, որը պետք է տպագրված լինի հսկիչ դրամարկղային մեքենայի (ՀԴՄ) կտրոնի վրա:
- Ըստ այդմ, ՀԴՄ կտրոնի վրա պետք է նշված լինեն ՀԴՄ կիրառողին և մեքենային վերաբերող տվյալները՝ ՀԴՄ կտրոնի 8-նիշանոց հերթական համարը, ՀԴՄ կիրառողի անվանումը, ՀՎՀՀ-ն, ՀԴՄ-ի գրանցման համարը և կիրառության վայրի հասցեն: Շրջիկ առևտրի կետերով մանրածախ վաճառքի դեպքում նշվում են կազմակերպության կամ անհատ ձեռնարկատիրոջ գտնվելու (հաշվառման)

վայրի հասցեն, ինչպես նաև ավտոմոբիլի (կցորդի, կիսակցորդի) մակնիշն ու հաշվառման համարանիշը: Եթե կտրոնը տրամադրվում է կազմակերպության ներկայացուցչին, անհատ ձեռնարկատիրոջը, նոտարին կամ նրանց ներկայացուցչին, կտրոնի վրա նշվում է նաև ապրանք ձեռք բերողի, աշխատանք ընդունողի կամ ծառայություն ստացողի ՀՎՀՀ-ն:

- Գործարքի վերաբերյալ կտրոնում նշվում են տպագրման ճշգրիտ ժամանակը (մինչև վայրկյանը), սպասարկող բաժնի համարը, գանձապահի համարը, ֆիսկալավորման ռեժիմի նշանը (Ֆ) և հարկային մարմնի հաստատած ալգորիթմով գեներացվող 8-նիշանոց ֆիսկալ համարը: Ֆիսկալ համարը չի նշվում վերադարձի կտրոններում: Արտաքին (առևտրային) ծրագիր կիրառելու դեպքում ժամանակը պետք է գեներացված լինի հենց ՀԴՄ-ի կողմից: Կտրոնում նշվում են նաև՝
- ապրանքի անվանումը և ԱՏԳ ԱԱ ծածկագիրը, իսկ աշխատանքի կամ ծառայության դեպքում՝ անվանումը և կոդը,
- գնվող ապրանքի քանակը և չափման միավորը,
- կիրառված զեղչը,
- վճարման ենթակա գումարներն՝ ըստ բաժինների,
- ընդհանուր գումարը, իսկ ԱԱՀ վճարողների համար ԱԱՀ-ով հարկվող գործարքների դեպքում՝ նաև ԱԱՀ-ի գումարը:
- Հանրային սննդի ծառայությունների դեպքում կտրոնում պետք է նշվի փաստացի մատուցված ճաշացուցակը՝ կերակրատեսակների, խոհարարական արտադրատեսակների, խմորեղենի, հացաբուլկեղենի և գնված այլ ապրանքների անվանումները: Ապրանքի, աշխատանքի կամ ծառայության անվանման, ծածկագրի, քանակի և չափման միավորի մասին տվյալները նշվեն Կառավարության սահմանած կարգով և ժամկետներում:
- Առանձին պահանջներ են սահմանվել նաև որոշակի ոլորտների համար: Մասնավորապես, նույնականացման միջոցներով դրոշմավորված ապրանքներ վաճառելիս կտրոնում պետք է նշվեն նույնականացման միջոցների քանակը և դրանց հիման վրա հարկային մարմնի ալգորիթմով գեներացվող ստուգիչ համարը: Բժշկական օգնության և սպասարկման ծառայություններ մատուցելիս յուրաքանչյուր ծառայության համար կտրոնում նշվում է էլեկտրոնային առողջապահության համակարգի գեներացրած անհատականացված նույնականացման ծածկագիրը:
- Կանխավճար ստանալիս, ինչպես նաև այն դեպքերում, երբ վճարման պահին պարզ չէ, թե ինչ ապրանք, աշխատանք կամ ծառայություն է տրամադրվելու, կտրոնի վրա կատարվում է «կանխավճար» գրառում: Այդպիսի կտրոններում չեն նշվում բաժնի համարը, ապրանքի (ծառայության) անվանումն ու ծածկագիրը, քանակը, ընդհանուր գումարը, ԱԱՀ-ի գումարը և դրոշմավորված ապրանքների տվյալները:

Կառավարության 2017 թվականի հունիսի 29-ի N 751-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին N 1315-Ն (ընդունվել է՝ 03.09.2026թ., ուժի մեջ է մտնում՝ 01.01.2027թ., բացառությամբ 1-ին կետի 11-13-րդ ենթակետերի, որոնք ուժի մեջ են մտնում Ֆինանսների նախարարությանը լիազորված օպերատորի թվային համակարգին և հարկային մարմնի էլեկտրոնային տեղեկատվական համակարգին համապատասխանաբար հասանելիություն տրամադրելուն հաջորդող աշխատանքային օրը)

- Որոշմամբ փոփոխվել է օտարերկրյա քաղաքացիներին և քաղաքացիություն չունեցող անձանց ՀՀ-ում ձեռք բերված և արտահանվող ապրանքների համար վճարված ԱԱՀ-ի գումարները փոխհատուցելու կարգը: Նոր կարգով ԱԱՀ-ի վերադարձը կարող է իրականացվել նաև Կառավարության կողմից լիազորված օպերատորի միջոցով:

- Լիազորված օպերատոր կարող է լինել հեղինակավոր օտարերկրյա կազմակերպությունը կամ դրա մասնաճյուղը, եթե կազմակերպությունը առնվազն 10 այլ պետությունում ներդրել և գործարկել է ԱԱՀ-ի վերադարձի թվային համակարգեր: Օպերատորներին ընտրում է Պետական եկամուտների կոմիտեն: Որոշումն ուժի մեջ մտնելու օրվան հաջորդող տասներորդ օրը կոմիտեն իր պաշտոնական կայքում հրապարակում է հայտարարություն: Ընտրվում են այն կազմակերպությունները, որոնք դիմել են և համապատասխանում են սահմանված չափանիշներին: Կոմիտեն և օպերատորը կնքում են պայմանագիր, որով սահմանվում են, ի թիվս այլնի, օպերատորի լիազորությունները, հաշվետվությունների ներկայացումը, մաքսային մարմնի հետ տեղեկատվության փոխանակումը, պարտականությունները չկատարելու դեպքում պատասխանատվության միջոցները և լիազորությունների դադարեցման հիմքերը:
- Պայմանագրի գործողության ընթացքում ԱԱՀ-ի վերադարձն իրականացվում է բացառապես օպերատորի միջոցով: Այդ դեպքում ԱԱՀ-ը վերադարձվում է, եթե օտարերկրյա անձը մեկ օրացուցային օրվա ընթացքում նույն հարկ վճարողից ԱԱՀ-ի վերադարձի հաշվով ձեռք է բերել առնվազն 10,000 դրամ արժողությամբ (ներառյալ ԱԱՀ-ը) ապրանքներ: ԱԱՀ-ը չի վերադարձվում, եթե փոխհատուցման ենթակա գումարը 1,667 դրամից պակաս է: Մաքսային մարմինների միջոցով վերադարձի համար գործում են ընդհանուր շեմերը՝ 50,000 դրամ գնման արժեք և 8,335 դրամ փոխհատուցման ենթակա ԱԱՀ: Եթե օպերատորի լիազորությունները դադարեցվում են, չվերադարձված գումարները և դրանից հետո ներկայացված դիմումների գումարները վերադարձնում են մաքսային մարմինները՝ մինչև նոր օպերատորի հետ պայմանագիր կնքելը:
- Օպերատորի ունի հետևյալ իրավունքներն ու պարտականությունները՝
  - իր միջոցների հաշվին ստեղծել, ներդնել և անխափան գործարկել ԱԱՀ-ի վերադարձի ամբողջական թվային համակարգ, որը տեղեկատվություն է փոխանակում հարկային մարմնի էլեկտրոնային համակարգի հետ,
  - ԱԱՀ-ը վերադարձնելիս գանձել միջնորդավճար, որը չի կարող գերազանցել վերադարձվող ԱԱՀ-ի գումարի 25 տոկոսը,
  - յուրաքանչյուր շաբաթվա վերջին աշխատանքային օրը Ֆինանսների նախարարություն ներկայացնել տեղեկություններ վերադարձված ԱԱՀ-ի գումարների վերաբերյալ և նախարարությանը տրամադրել հասանելիություն իր թվային համակարգին,
  - անհրաժեշտության դեպքում ստանալ իր գործունեության համար պահանջվող լիցենզիաները կամ թույլտվությունները:
  - Ֆինանսների նախարարությունը տվյալները համադրում է օպերատորի թվային համակարգի միջոցով: Գրությունն ստանալուց հետո 10 աշխատանքային օրվա ընթացքում նախարարությունը հաստատված ԱԱՀ-ի գումարների հանրագումարը փոխանցում է օպերատորի բանկային հաշվին:
  - Օպերատորը ԱԱՀ-ը կարող է վերադարձնել կանխիկ կամ անկանխիկ եղանակով: Վերադարձի կարգը և գործառնական պայմանները սահմանում է օպերատորը՝ որոշմամբ սահմանված պահանջների պահպանմամբ: Կանխիկ վերադարձը կարող է իրականացվել սահմանային անցման կետերում գործող բանկերի կամ վճարահաշվարկային կազմակերպությունների մասնաճյուղերի կամ ֆինանսական գործառնությունների ավտոմատ սարքերի միջոցով: Օտարերկրյա անձը փաստաթղթերը ներկայացնում է օպերատորին, սակայն դրանք տրամադրում է նաև մաքսային մարմնին, որը ստուգում է ԱԱՀ-ի վերադարձի հարկային հաշվում նշված ապրանքի առկայությունը: Դրանից հետո հարկային հաշվի վրա օպերատորը կատարում է «Ենթակա է փոխհատուցման» գրառումը, նշում է գումարը և կնքում: Փաստաթղթերը պահվում են օպերատորի

մոտ, իսկ տվյալներն արտացոլվում են նրա թվային համակարգում (1-ին կետի 11-րդ ենթակետ):

- Մաքսային մարմինների միջոցով վերադարձի դեպքում մաքսային մարմինը փոխհատուցման ենթակա գումարների մասին տեղեկությունը էլեկտրոնային եղանակով ուղարկում է Ֆինանսների նախարարություն յուրաքանչյուր շաբաթվա վերջին աշխատանքային օրը: Նախարարությունը համադրման արդյունքում հաստատված գումարները ԱՄՆ դոլարով փոխանցում է հարկային հաշվում նշված վճարային քարտին՝ ոչ ուշ, քան տեղեկությունն ստանալու օրվան հաջորդող 30-րդ օրը: Բանկի կողմից մերժված և վերադարձված գումարները կրկին չեն փոխանցվում և մուտքագրվում են պետական բյուջե (1-ին կետի 13-րդ ենթակետ):

ՀՀ կառավարության 2026 թվականի սեպտեմբերի 11-ի «Շահումով խաղի, ինտերնետ շահումով խաղի և բուքմեյքերային գործունեության կազմակերպիչների կողմից վերահսկող մարմին իրենց գործունեության վերաբերյալ ամսական հաշվետվություններ ներկայացնելու կարգը, ժամկետները, բովանդակությունը և ձևը սահմանելու մասին» N 1343-Ն որոշում (ընդունվել է 11.09.2026 թ., ուժի մեջ է մտնում «Խաղային գործունեության կարգավորման մասին» օրենքն ամբողջությամբ գործողության մեջ դրվելու օրվանից)

- Որոշմամբ սահմանվել են շահումով խաղի, ինտերնետ շահումով խաղի և բուքմեյքերային գործունեության կազմակերպիչների կողմից ՀՀ պետական եկամուտների կոմիտե իրենց գործունեության վերաբերյալ ամսական հաշվետվություններ ներկայացնելու կարգը, ժամկետները և հաշվետվությունների օրինակելի ձևերը: Մասնավորապես՝
- Հաշվետու ժամանակահատված է համարվում յուրաքանչյուր ամիսը, իսկ հաշվետվությունները պետք է ներկայացվեն մինչև հաշվետու ամսվան հաջորդող ամսվա 20-ը ներառյալ: Հաշվետվությունները ներկայացվում են էլեկտրոնային եղանակով, բացառությամբ այն դեպքերի, երբ առկա է էլեկտրոնային համակարգի խափանման վերաբերյալ պաշտոնական հաղորդագրություն, որի դեպքում հաշվետվությունները կարող են ներկայացվել թղթային եղանակով:
- Շահումով խաղերի կազմակերպիչների հաշվետվությունները պետք է ներառեն տեղեկություններ կենդանի խաղերի շրջանակներում գնված և վերադարձված խաղանիշերի (ժետոնների) հանրագումարների, տրամադրված բոնուսների և դրանք ստացած անձանց քանակի, խաղերից ստացված համախառն եկամտի, խաղագումարներից գանձված միջնորդավճարների, խաղասեղանների սպասարկման ժամավճարների, մրցաշարերի մասնակցության վճարների, ինչպես նաև մեքենայացված խաղային սարքավորումների նույնականացման տվյալների, դրանցում մուտքագրված և ելքագրված միջոցների, կատարված խաղադրույքների և շահումների վերաբերյալ:
- Ինտերնետ շահումով խաղերի կազմակերպիչների հաշվետվությունները պետք է ներառեն տեղեկություններ խաղային հաշիվների՝ հաշվետու ժամանակահատվածի սկզբի և ավարտի դրությամբ առկա մնացորդների, հաշվետու ժամանակահատվածում խաղային հաշիվներին մուտքագրված և դրանցից ելքագրված գումարների, կատարված խաղադրույքների, շահումների, տրամադրված բոնուսների և դրանք ստացած անձանց քանակի, «խաղացողն ընդդեմ խաղացողի» կանոններով կազմակերպված խաղերից ստացված եկամտի և գործունեության համախառն եկամտի վերաբերյալ:
- Բուքմեյքերային գործունեության կազմակերպիչների հաշվետվությունները պետք է ներառեն տեղեկություններ խաղային հաշիվների սկզբնական և վերջնական մնացորդների, դրանցում մուտքագրված և ելքագրված գումարների, կատարված

խաղադրույքների, շահումների, տրամադրված բոնուսների և դրանք ստացած անձանց քանակի, «խաղացողն ընդդեմ խաղացողի» կանոններով կազմակերպված խաղերից ստացված եկամտի և գործունեության համախառն եկամտի վերաբերյալ:

- Որոշմամբ ուժը կորցրած են ճանաչվել նաև ՀՀ կառավարության 2011 թվականի սեպտեմբերի 8-ի N 1355-Ն և 2015 թվականի ապրիլի 30-ի N 451-Ն որոշումները, որոնցով սահմանվում էին ինտերնետ շահումով խաղերի և շահումով խաղերի կամ խաղատների կազմակերպիչների կողմից ՀՀ պետական եկամուտների կոմիտե ֆինանսական հոսքերի վերաբերյալ ամսական հաշվետվություններ ներկայացնելու կարգը, ժամկետները, բովանդակությունը և ձևը:

ՀՀ կառավարության 2026 թվականի սեպտեմբերի 17-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության 2024 թվականի օգոստոսի 8-ի N 1257-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» N 1367-Ն որոշում (ընդունվել է 17.09.2026 թ., ուժի մեջ՝ 28.09.2026 թ.):

- Որոշմամբ փոփոխություններ և լրացումներ են կատարվել հարկային իրավախախտման առարկա հանդիսացող գույքը հարկադիր կարգով որպես պետական սեփականություն վերցնելու, պահպանելու և տնօրինելու կարգում՝ վերանայելով գույքի արգելադրման, պատասխանատու պահպանության և բռնագրավման ընթացակարգերը: Մասնավորապես՝
- Սահմանվել է, որ հարկային իրավախախտման առարկա հանդիսացող գույքի բռնագրավում նախատեսող իրավախախտում հայտնաբերելու դեպքում հարկային հսկողություն իրականացնող պաշտոնատար անձն անհապաղ որոշում է կայացնում տվյալ գույքի վրա արգելանք դնելու մասին:
- Գույքի վրա արգելանք դնելու մասին որոշման մեջ պետք է նշվեն ենթադրյալ իրավախախտման համառոտ նկարագրությունը, արգելադրման ենթակա գույքը, արգելադրման ժամանակը և վայրը, ինչպես նաև գույքի փաստացի վիճակի վերաբերյալ տվյալները: Որոշումը պետք է պարունակի նաև արգելադրված գույքի նկատմամբ ապօրինի արարք կատարելու համար նախատեսված քրեական պատասխանատվության մասին նշում: Արգելանքն իրականացնող պաշտոնատար անձը պարտավոր է համապատասխան անձին գրավոր նախազգուշացնել այդ պատասխանատվության մասին:
- Սահմանվել է, որ արգելադրված գույքը հանձնվում է հարկ վճարողի պահպանությանը: Եթե հարկ վճարողը փորձում է գույքը կամ դրա առանձին բաղադրամասերը վատնել, թաքցնել, ապօրինաբար այլ անձի հանձնել, փչացնել կամ ոչնչացնել, ապա գույքը հարկային հսկողություն իրականացնող պաշտոնատար անձի պատճառաբանված որոշմամբ վերցվում է պատասխանատու պահպանության՝ հարկային մարմնի կամ պաշտոնատար անձի կողմից որոշված տարածքում:
- Վերանայվել է գույքի բռնագրավման վերաբերյալ որոշման ընդունման ընթացակարգը: Սահմանվել է, որ ՀՀ հարկային օրենսգրքի 389-րդ և 390-րդ հոդվածներով նախատեսված դեպքերում բռնագրավման որոշումն ընդունվում է Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքով սահմանված կարգով ընդունված՝ պատասխանատվություն նախատեսող վարչական ակտն անբողոքարկելի դառնալուց հետո, իսկ ՀՀ հարկային օրենսգրքի 407-րդ և 424-րդ հոդվածներով նախատեսված իրավախախտումների դեպքում՝ պարտավորություն առաջադրող վարչական ակտն անբողոքարկելի դառնալուց հետո: Երկու դեպքում էլ բռնագրավման որոշումն ընդունվում է «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքով

սահմանված կարգով հարուցված վարչական վարույթի շրջանակներում:

- Հստակեցվել է գույքի պահպանման ծախսերի բաշխումը: Մինչև գույքը որպես պետական սեփականություն վերցնելը դրա պահպանման ծախսերը կրում է հարկ վճարողը, իսկ դրան հաջորդող օրվանից՝ պետությունը՝ ի դեմս հարկային մարմնի:
- Նախատեսվել է, որ գույքի բռնագրավման վերաբերյալ որոշման չկայացման կամ անվավեր ճանաչման դեպքում գույքը վերադարձվում է հարկ վճարողին, իսկ պետությունը՝ ի դեմս հարկային մարմնի, պարտավոր է փոխհատուցել գույքի արգելադրման հետևանքով հարկ վճարողին պատճառված վնասը:

ՀՀ կառավարության 2022 թվականի հոկտեմբերի 6-ի N 1569-Ն որոշման մեջ փոփոխություն և լրացում կատարելու N 1355-Ն մասին (ընդունված՝ 17.09.2026 թ., ուժի մեջ՝ 03.10.2026 թ.):

- Որոշմամբ փոփոխություններ և լրացումներ են կատարվել տարածական տվյալների ստանդարտացման ուղեցույցներում՝ սահմանելով պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների, ինչպես նաև պաշտոնատար անձանց կողմից տրամադրվող թույլտվությունների, լիցենզիաների և գործունեության իրականացման իրավունքը հաստատող այլ ակտերի վերաբերյալ թեմատիկ տարածական տվյալների շերտերի ձևավորման միասնական պահանջներ: Մասնավորապես՝
- Ընդլայնվել և հստակեցվել է թեմատիկ տարածական տվյալների խմբերի շրջանակը՝ ներառելով հատուկ պահպանվող տարածքների, բնական աղետների, գյուղատնտեսության, կլիմայի, ենթակառուցվածքների, շրջակա միջավայրի աղտոտվածության և մոնիթորինգի, անտառների, երկրաբանության, արտադրության, կենդանական և բուսական տեսակների տարածման, պատմամշակութային հուշարձանների, ջրագրության, տրանսպորտային ցանցի, հողերի աշխարհագրության և այլ ոլորտների վերաբերյալ տվյալները:
- Սահմանվել են պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների, ինչպես նաև պաշտոնատար անձանց կողմից տրամադրվող թույլտվությունների, լիցենզիաների և գործունեության իրականացման իրավունքը հաստատող այլ ակտերի թեմատիկ տարածական տվյալների շերտերը: Դրանք, կախված ոլորտային առանձնահատկություններից, պետք է ներկայացվեն կետային, գծային կամ պոլիգոնային տեսքով:
- Նախատեսվել է, որ նշված տարածական տվյալների շերտերը պետք է պարունակեն տեղեկություններ համապատասխան ակտի տեսակի և կատեգորիայի, համարի, ընդունման և գործողության ավարտի ամսաթվերի, ակտը տրամադրող մարմնի, հասցեատիրոջ, ակտով նախատեսված գործողության նկարագրության և ակտի ընթացիկ կարգավիճակի վերաբերյալ: Միաժամանակ, պետք է ներառվեն տարածական օբյեկտի կոորդինատները, մարզի և համայնքի անվանումները, ինչպես նաև համապատասխան ժամանակային տվյալները:
- Սահմանվել են տարածական տվյալների շերտերի հիմնական հատկանիշների տեխնիկական պահանջները, այդ թվում՝ տվյալների դաշտերի անվանումները, ձևաչափերը և թույլատրելի ծավալները՝ դրանց միասնականությունն ու համադրելիությունն ապահովելու նպատակով:

Եվրասիական տնտեսական միության անդամ չհանդիսացող պետություններից Հայաստանի Հանրապետություն ներմուծվող M2 և M3 կատեգորիաների անվավոր տրանսպորտային միջոցները շրջանառության մեջ դնելու N 1387-Ն մասին (ընդունված՝ 24.09.2026 թ., ուժի մեջ՝ 26.09.2026 թ.):

- Որոշմամբ սահմանվել է ԵԱՏՄ անդամ չհանդիսացող պետություններից Հայաստանի Հանրապետություն ներմուծվող M2 և M3

կատեգորիաների անվավոր տրանսպորտային միջոցները շրջանառության մեջ դնելու ժամանակավոր հատուկ կարգավորում: Մասնավորապես՝

- Մինչև 2028 թվականի դեկտեմբերի 31-ը թույլատրվել է իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերի կողմից ԵԱՏՄ անդամ չհանդիսացող պետություններից ներմուծվող՝ արտադրման օրվանից ոչ ավելի, քան երեք տարի անցած M2 և M3 կատեգորիաների տրանսպորտային միջոցները շրջանառության մեջ դնել ՀՀ տարածքում՝ սահմանված համապատասխանության գնահատման փաստաթղթերի առկայության պայմանով:
- Սահմանվել է, որ համապատասխանությունը կարող է հավաստվել հետևյալ փաստաթղթերից որևէ մեկով՝
- 1. «Անվավոր տրանսպորտային միջոցների անվտանգության մասին» Մաքսային միության տեխնիկական կանոնակարգով (ՄՄ ՏԿ 018/2011) նախատեսված՝ մինչև տրանսպորտային միջոցը շրջանառության մեջ դնելն առկա համապատասխանության գնահատման փաստաթղթով:
- 2. Եվրոպական միության օրենսդրությամբ սահմանված կարգով տրված տրանսպորտային միջոցի ամբողջական տիպի հաստատման վկայականով (EU Whole-Vehicle Type-Approval Certificate) և արտադրողի կողմից տրված համապատասխանության հավաստագրով (Certificate of Conformity, CoC)՝ միասին:
- Մինչև 2027 թվականի դեկտեմբերի 31-ը նախատեսվել է նշված տրանսպորտային միջոցների ներմուծման և շրջանառության մեջ դնելու հնարավորություն՝ առանց արտակարգ օպերատիվ ծառայությունների կանչի համակարգերով (սարքվածքներով) համալրման պահանջների կիրառման:
- Սահմանվել է, որ հատուկ կարգավորմամբ տրանսպորտային միջոցները շրջանառության մեջ դնելիս դրանց համար ՄՄ ՏԿ 018/2011 տեխնիկական կանոնակարգով նախատեսված համապատասխանության գնահատման նոր փաստաթղթեր չեն ձևակերպվում: Որոշմամբ նախատեսված փաստաթղթերն ընդունվում են պետական հաշվառման ժամանակ, իսկ պետական հաշվառման մյուս պահանջները կատարվում են ընդհանուր կարգով:
- Նախատեսվել է, որ հատուկ կարգավորմամբ շրջանառության մեջ դրված տրանսպորտային միջոցների շրջանառությունը թույլատրվում է միայն Հայաստանի Հանրապետության տարածքում: Նշված սահմանափակումը, ինչպես նաև տրանսպորտային միջոցը հատուկ կարգավորմամբ շրջանառության մեջ դրված լինելու հանգամանքը, պետք է ամրագրվեն տրանսպորտային միջոցների հաշվառման էլեկտրոնային ռեգիստրում:

Էլեկտրոնային առևտրի օպերատորների ռեեստրի ձևը, ռեեստրում ընդգրկման մասին վկայականի ձևը և դրա լրացման կարգը սահմանելու մասին ՀՀ ՊԵԿ նախագահի N 979-Ն հրաման (ընդունված՝ 16.09.2026 թ., ուժի մեջ՝ «Մաքսային կարգավորման մասին» օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» 2026 թվականի մարտի 4-ի ՀՕ-84-Ն օրենքի ուժի մեջ մտնելու օրվանից):

- Սահմանվել է էլեկտրոնային առևտրի օպերատորների ռեեստրի միասնական ձևը, որում պետք է ներառվեն իրավաբանական անձին ռեեստրում ընդգրկելու մասին վկայականի համարը, ռեեստրում ընդգրկման ամսաթիվը, օպերատորի անվանումը, հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ), գտնվելու վայրը և կապի տվյալները:
- Նախատեսվել է, որ ռեեստրում պետք է ներառվեն նաև էլեկտրոնային առևտրի օպերատորի գործունեության համար օգտագործվող տարածքների, շինությունների կամ բաց հրապարակների գտնվելու վայրի և ընդհանուր մակերեսների, դրանց տեղակայման տարածքը սպասարկող մաքսային մարմնի, ինչպես նաև օպերատորին ռեեստրից հանելու ամսաթվի վերաբերյալ տեղեկությունները: Ռեեստրի ձևով նախատեսված է նաև լրացուցիչ տեղեկություններ ներառելու հնարավորություն:

- Հաստատվել է էլեկտրոնային առևտրի օպերատորների ռեեստրում ընդգրկման մասին վկայականի ձևը, որով ՀՀ պետական եկամուտների կոմիտեն հավաստում է համապատասխան իրավաբանական անձի ընդգրկումը ռեեստրում՝ նշելով նաև այն տարածքները, շինությունները կամ բաց հրապարակները, որոնցով տվյալ օպերատորն ընդգրկված է ռեեստրում:

Հաշվետու ֆինանսական հաստատության կողմից պատշաճ ստուգման ընթացակարգերի արդյունքում հաշվետու հաշիվների չբացահայտման դեպքում հարկային մարմնին զրոյական հաշվետվության ներկայացման կարգը և ձևը սահմանելու մասին ՀՀ ՊԵԿ նախագահի N 988-Ն հրաման (ընդունված՝ 18.09.2026 թ., ուժի մեջ՝ 12.10.2026 թ.):

- Սահմանվել է, որ հաշվետու ֆինանսական հաստատությունները, որոնք Միասնական հաշվետվողական ստանդարտով (CRS) և ՀՀ օրենսդրությամբ նախատեսված պատշաճ ստուգման ընթացակարգերի իրականացման արդյունքում չեն բացահայտել հաշվետու հաշիվներ, պարտավոր են հարկային մարմին ներկայացնել զրոյական հաշվետվություն՝ ՀՀ հարկային օրենսգրքի 443.4-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված ժամկետում:
- Նախատեսվել է, որ զրոյական հաշվետվությունը ներկայացվում է էլեկտրոնային եղանակով՝ «Տեղեկատվության ավտոմատ փոխանակման համակարգի» կամ crs@taxservice.am էլեկտրոնային փոստի հասցեի միջոցով:
- Հաստատվել է զրոյական հաշվետվության ձևը, որը պետք է ներառի հաշվետու ֆինանսական հաստատության անվանումը, հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ), հասցեն, ինչպես նաև հայտարարություն այն մասին, որ համապատասխան հարկային տարվա ընթացքում պատշաճ ստուգման ընթացակարգերի արդյունքում հաշվետու հաշիվներ չեն բացահայտվել:
- Սահմանվել է, որ զրոյական հաշվետվությունը ներկայացնելուց հետո, եթե հաշվետու ֆինանսական հաստատությունը նույն հաշվետու ժամանակաշրջանի վերաբերյալ հայտնաբերում է հաշվետու հաշիվ, պարտավոր է այն հայտնաբերելու օրվանից 10 օրվա ընթացքում համապատասխան տեղեկություններն օրենքով սահմանված կարգով ներկայացնել հարկային մարմին՝ «Տեղեկատվության ավտոմատ փոխանակման համակարգի» կամ նշված էլեկտրոնային փոստի հասցեի միջոցով:
- Միաժամանակ, ուժը կորցրած է ճանաչվել ՀՀ ՊԵԿ նախագահի 2025 թվականի փետրվարի 4-ի N 122-Ն հրամանը, որով սահմանվում էր օտարերկրյա պետությունների (տարածքների) ռեզիդենտներ հանդիսացող հաշվետերերի և վերահսկող անձանց չբացահայտման մասին ֆինանսական հաստատությունների կողմից հարկային մարմնին ներկայացվող տեղեկության ձևը:

ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի նախագահի 2017 թվականի սեպտեմբերի 25-ի N 326-Ն հրամանում փոփոխություն կատարելու մասին ՀՀ ՊԵԿ նախագահի N 995-Ն հրաման (ընդունված՝ 23.09.2026 թ., ուժի մեջ՝ 01.01.2027 թ., առանձին կարգավորումների համար՝ 01.02.2027 թ.):

- Նոր խմբագրությամբ են շարադրվել ոչ ռեզիդենտ շահութահարկ վճարողներին վճարված եկամուտների, այդ եկամուտներից հաշվարկված, պահված և պետական բյուջե վճարված շահութահարկի գումարների վերաբերյալ հաշվարկի ձևը և դրա լրացման կարգը: Միաժամանակ, հաշվարկի շրջանակում ներառվել են բանկերի կողմից ռեզիդենտ կազմակերպություններին որոշակի բաժնետոմսերից, բաժնեմասերից և փայաբաժիններից վճարման ենթակա շահաբաժինների վերաբերյալ տեղեկությունները Մասնավորապես՝
- Հաստատվել է հաշվարկի նոր ձևը՝ բաղկացած հինգ բաժիններից, որոնցում առանձին արտացոլվում են ոչ ռեզիդենտ կազմակերպություններին վճարված՝ ՀՀ աղբյուրներին դասվող եկամուտները, միջազգային պայմանագրերով հարկումից

ազատված կամ նվազ դրույքաչափով հարկվող եկամուտները, մշտական հաստատություններին վերագրվող եկամուտները, ՀՀ աղբյուրներին չդասվող եկամուտները, ինչպես նաև բանկերի կողմից ռեզիդենտ կազմակերպություններին վճարվող որոշակի շահաբաժինները:

- Նախատեսվել է, որ հաշվարկում պետք է ներառվեն ոչ ռեզիդենտ կազմակերպության անվանումը, հարկ վճարողի նույնականացման համարը, կազմակերպական-իրավական ձևը, իրավաբանական հասցեն, գրանցման պետության կոդը, եկամտի վճարման ամսաթիվը, եկամտի տեսակը և գումարը, իսկ հարկվող եկամուտների դեպքում՝ նաև կիրառվող շահութահարկի դրույքաչափը և հարկի գումարը:
- Սահմանվել են հաշվարկում արտացոլվող եկամուտների առանձին կոդեր՝ մասնավորապես շահաբաժինների, պարտքային պարտավորությունների մասով եկամուտների, ռոյալթիների, մտավոր սեփականության օբյեկտների օգտագործումից ստացված եկամուտների, վարձակալությունից, գույքի և արժեթղթերի օտարումից ստացված եկամուտների, ապահովագրական հատուցումների, տոկոսների և այլ եկամուտների համար:
- Նախատեսվել է միջազգային պայմանագրերով սահմանված հարկային արտոնությունների առանձին արտացոլում: Մասնավորապես, հաշվարկի երկրորդ բաժնում պետք է ներառվեն ՀՀ աղբյուրներին դասվող այն եկամուտները, որոնք կրկնակի հարկումը բացառելու մասին համաձայնագրերի կամ ՀՀ վավերացրած այլ միջազգային պայմանագրերի համաձայն չեն հարկվում Հայաստանում կամ հարկվում են ՀՀ հարկային օրենսգրքով նախատեսված դրույքաչափից ցածր դրույքաչափով՝ նշելով կիրառված դրույքաչափը և շահութահարկի գումարը:
- Հստակեցվել է մշտական հաստատությունների միջոցով գործունեություն իրականացնող ոչ ռեզիդենտ կազմակերպություններին վճարված եկամուտների արտացոլման կարգը: Մշտական հաստատությանը վերագրվող՝ ՀՀ աղբյուրներին դասվող եկամուտները ներառվում են հաշվարկի երրորդ բաժնում, իսկ մշտական հաստատությանը չվերագրվող եկամուտները՝ առաջին կամ երկրորդ բաժնում՝ ըստ համապատասխան հարկման ռեժիմի:
- Նախատեսվել է, որ հաշվարկի հինգերորդ բաժինը լրացվում է բացառապես բանկերի կողմից: Դրանում ներառվում են ռեզիդենտ կազմակերպություններին բանկերի՝ ՀՀ կառավարության սահմանած ցանկում ներառված ֆոնդային բորսաներում չցուցակված բաժնետոմսերից կամ բանկի բաժնեհավաք կամ փայահավաք կապիտալում բաժնեմասերից, փայաբաժիններից վճարման ենթակա շահաբաժինները: Նույն բաժնում ներառվում են նաև նշված ֆոնդային բորսաներում ցուցակված բաժնետոմսերից ռեզիդենտ կազմակերպություններին վճարվող շահաբաժինները, եթե շահաբաժին ստացող բաժնետիրոջը պատկանող՝ տվյալ բանկի ցուցակված բոլոր բաժնետոմսերի անվանական արժեքը շահաբաժինների բաշխման օրվա դրությամբ գերազանցում է բանկի ընդհանուր ցուցակված բաժնետոմսերի անվանական արժեքի 1%-ը:
- Բանկերի կողմից լրացվող հինգերորդ բաժնում նախատեսվել է արտացոլել շահաբաժին ստացող ռեզիդենտ կազմակերպության նույնականացման տվյալները, անհրաժեշտության դեպքում՝ բանկի և շահաբաժին ստացողի ցուցակված բաժնետոմսերի անվանական արժեքները, շահաբաժնի բաշխման ամսաթիվը, գումարը, կիրառվող շահութահարկի դրույքաչափը և հաշվարկված շահութահարկը: Բանկերի կողմից ոչ ռեզիդենտ կազմակերպություններին վճարվող շահաբաժինները շարունակում են արտացոլվել հաշվարկի առաջին կամ երկրորդ բաժիններում:

- Հրամանն ուժի մեջ է մտնում 2027 թվականի հունվարի 1-ից: Բացառություն է նախատեսվել բանկերի թողարկած՝ ՀՀ կառավարության սահմանած ցանկում ներառված ֆոնդային բորսաներում չցուցակված բաժնետոմսերից, ինչպես նաև բանկի բաժնեհավաք կամ փայահավաք կապիտալում բաժնեմասերից կամ փայաբաժիններից ռեզիդենտ և ոչ ռեզիդենտ կազմակերպություններին բաշխման կամ վճարման ենթակա շահաբաժինների վերաբերյալ կարգավորումների համար, որոնք կիրառվելու են 2027 թվականի փետրվարի 1-ից՝ ներառյալ մինչև 2027 թվականի հունվարի 1-ն ընկած հաշվետու ժամանակաշրջանների գործունեության արդյունքներով բաշխվող կամ վճարվող շահաբաժինները:

ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի նախագահի 2016 թվականի դեկտեմբերի 30-ի N 298-Ն հրամանում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին (ՀՀ ՊԵԿ նախագահի N 1000-Ն հրաման (ընդունված՝ 24.09.2026 թ., ուժի մեջ՝ 01.01.2027 թ.):

- Փոփոխություններ և լրացումներ են կատարվել ավելացված արժեքի հարկի (ԱԱՀ) և ակցիզային հարկի միասնական հաշվարկի ձևում և դրա լրացման կարգում՝ նախատեսելով առանձին գործարքների, դրանց ճշգրտումների և առևտրի էլեկտրոնային հարթակների միջոցով իրականացվող ապրանքների մատակարարումների արտացոլման նոր կարգավորումներ Մասնավորապես՝
- Միասնական հաշվարկում լրացվել է նոր՝ 9.1-ին կետ, որով նախատեսվում է ՀԴՄ վերադարձի կտրոնով գործարքների նվազեցման արտացոլում: Սահմանվել է, որ այդ կետի [Ա] վանդակում լրացվում է վերադարձվող գործարքի դիմաց հատուցման ընդհանուր գումարը՝ ներառյալ ԱԱՀ-ն, իսկ [Բ] վանդակում՝ ԱԱՀ-ի գումարը, որը հաշվարկվում է հատուցման ընդհանուր գումարի նկատմամբ 16.67% հաշվարկային դրույքաչափի կիրառմամբ:
- Լրացվել է նոր կետ (13.1-ին), որով նախատեսվում է ԱԱՀ-ից ազատված գործարքների հարկման բազայի նվազեցումների և ավելացումների առանձին արտացոլում: Նշված կետում լրացվում են ՀՀ հարկային օրենսգրքի 42-րդ հոդվածով նախատեսված դեպքերում դուրս գրված ճշգրտող հաշիվ վավերագրերով կամ ճշգրտող հարկային հաշիվներով արտացոլված՝ ԱԱՀ-ից ազատված գործարքների հարկման բազայի համապատասխան փոփոխությունները:
- Միասնական հաշվարկը լրացվել է 14.1-ին և 14.2-րդ կետերով, որոնք նախատեսված են առևտրի էլեկտրոնային հարթակը շահագործող ՀՀ ռեզիդենտ կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի համար: Դրանցով պետք է արտացոլվեն ՀՀ-ում մշտական հաստատություն չունեցող ԵԱՏՄ անդամ այլ պետության կազմակերպությունների կամ անհատ ձեռնարկատերերի կողմից էլեկտրոնային հարթակի միջոցով ՀՀ տարածքում անհատ ձեռնարկատեր կամ նոտար չհանդիսացող ֆիզիկական անձանց մատակարարված ապրանքների հարկման բազան և ԱԱՀ-ի գումարը, ինչպես նաև համապատասխան ապրանքների վերադարձի դեպքում գործարքների նվազեցումները: Ընդ որում, նշված կետերում արտացոլվող հարկման բազայի գումարները չեն մասնակցում հաշվետու ժամանակաշրջանի ԱԱՀ-ով հարկման բազայի ընդհանուր գումարի հաշվարկմանը:
- Հստակեցվել է ՀՀ տարածք ներմուծված՝ ԵԱՏՄ ապրանքի կարգավիճակ ունեցող ապրանքների՝ էլեկտրոնային առևտրի հարթակի միջոցով ֆիզիկական անձանց մատակարարման գործարքների արտացոլման կարգը: Նախատեսվել է, որ համապատասխան հարկման բազան և ԱԱՀ-ի գումարը հաշվարկում արտացոլվում են այն հաշվետու ժամանակաշրջանում, որն ընդգրկում է ապրանքները ֆիզիկական անձանց հանձնելու (փոխանցելու) օրը ներառող ամսվա վերջին օրը՝ անկախ այդ

օրվա ոչ աշխատանքային լինելու հանգամանքից:

- Լրացվել է նոր կետ (19.1), որով նախատեսվում է ձեռքբերումներին վերաբերող ճշգրտող հաշիվ վավերագրերով գործարքների հարկման բազայի նվազեցումների և ավելացումների առանձին արտացոլում: Միաժամանակ, հաշվարկի լրացման կարգի համապատասխան դրույթներում հարկային հաշիվների հետ մեկտեղ ներառվել են նաև հաշիվ վավերագրերը:
- Վերանայվել է միասնական հաշվարկի 16-րդ կետով նախատեսված ԱԱՀ-ի կրեդիտի հաշվարկման բանաձևը՝ հաշվի առնելով ՀԴՄ վերադարձի կտրոններով գործարքների նվազեցումները, էլեկտրոնային առևտրի հարթակներով իրականացվող մատակարարումները և դրանց վերադարձները, ինչպես նաև հաշվարկի այլ համապատասխան ցուցանիշները:
- Ակցիզային հարկի մասով լրացվել է նոր կետ (31.1), որով նախատեսվում է ՀՀ տարածքում որպես հումք ձեռք բերված ապրանքների մասով մատակարարների կողմից դուրս գրված ճշգրտող հարկային հաշիվներում առանձնացված ակցիզային հարկի գումարների նվազեցումների և ավելացումների առանձին արտացոլում: Համապատասխանաբար փոփոխվել է նաև միասնական հաշվարկի 33-րդ կետով նախատեսված ակցիզային հարկի հաշվարկման բանաձևը:

ՀՀ պետական եկամուտների կոմիտեի նախագահի 2019 թվականի օգոստոսի 27-ի N 558-Ն հրամանում լրացումներ կատարելու մասին ՀՀ ՊԵԿ նախագահի N 1001-Ն հրաման (ընդունված՝ 24.09.2026 թ., ուժի մեջ՝ 01.02.2027 թ., բացառությամբ առանձին կարգավորման, որն ուժի մեջ է մտնում 01.06.2027թ.):

- ՀՀ պետական եկամուտների կոմիտեի նախագահի հրամանով լրացումներ են կատարվել միկրոձեռնարկատիրության սուբյեկտ համարվելու վերաբերյալ հայտարարության ձևում՝ հստակեցնելով միկրոձեռնարկատիրության համակարգի կիրառման սահմանափակումների վերաբերյալ հայտարարագրվող տեղեկությունները: Մասնավորապես՝
- Միկրոձեռնարկատիրության սուբյեկտ համարվելու վերաբերյալ հայտարարության ձևի 5-րդ ենթակետը լրացվել է ռիելթորական և անշարժ գույքի կառավարման ծառայություններ մատուցելու վերաբերյալ դրույթով: Այսպիսով, հայտարարության համապատասխան կետում առանձին հիշատակվել են նաև նշված ծառայությունները՝ միկրոձեռնարկատիրության համակարգի կիրառման սահմանափակումների շրջանակում:
- Հայտարարության ձևը լրացվել է նոր՝ 13-րդ ենթակետով, որով նախատեսվում է, որ հայտարարություն ներկայացնող կազմակերպությունը պետք է հավաստի, որ չի հանդիսանում բանկի մասնակից (բաժնետեր) հանդիսացող կազմակերպություն:
- Հրամանի՝ բանկի մասնակցությամբ կազմակերպություններին վերաբերող լրացումն ուժի մեջ է մտնում 2027 թվականի փետրվարի 1-ից, իսկ ռիելթորական և անշարժ գույքի կառավարման ծառայություններին վերաբերող լրացումը՝ 2027 թվականի հունիսի 1-ից:

ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի նախագահի 2017 թվականի հունիսի 27-ի N 191-Ն հրամանում լրացում կատարելու մասին ՀՀ ՊԵԿ նախագահի N 1002-Ն հրաման (ընդունված՝ 24.09.2026 թ., ուժի մեջ՝ 01.02.2027 թ.):

- Հրամանով լրացում է կատարվել շրջանառության հարկ վճարող համարվելու վերաբերյալ հայտարարության ձևում՝ նախատեսելով, որ հայտարարություն ներկայացնող կազմակերպությունը պետք է հավաստի, որ չի հանդիսանում բանկի մասնակից (բաժնետեր) հանդիսացող կազմակերպություն:

ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի նախագահի 2016 թվականի դեկտեմբերի 30-ի N 300-Ն հրամանում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին ՀՀ ՊԵԿ նախագահի N 1003-Ն հրաման (ընդունված՝ 25.09.2026 թ., ուժի մեջ՝ 01.02.2027 թ., բացառությամբ առանձին կարգավորումների, որոնք ուժի մեջ են մտնում 01.12.2026 թ. և 01.06.2027 թ.):

- լրացումներ և փոփոխություններ են կատարվել եկամտային հարկի, սոցիալական և դրոշմանիշային վճարների ամսական հաշվարկի, ինչպես նաև տարեկան հաշվարկի (հայտարարագրի) ձևերում և դրանց լրացման կարգերում՝ նախատեսելով կրիպտոակտիվների օտարումից, կառավարման հանձնված անշարժ գույքի հետ կապված գործարքներից և բանկերի կողմից վճարվող շահաբաժիններից ստացվող եկամուտների արտացոլման նոր կարգավորումներ: Մասնավորապես՝
- Եկամտային հարկի ամսական հաշվարկի լրացման կարգում սահմանվել է, որ 2027 թվականի փետրվարի 1-ից բանկերի թողարկած՝ ՀՀ կառավարության սահմանած ցանկում ներառված ֆոնդային բորսաներում չցուցակված բաժնետոմսերից կամ բանկի բաժնեհավաք կամ փայահավաք կապիտալում բաժնեմասերից, փայաբաժիններից ստացվող շահաբաժինների նկատմամբ եկամտային հարկը հաշվարկվում է 15% դրույքաչափով: Նշված կարգավորումը տարածվում է նաև մինչև 2027 թվականի հունվարի 1-ն ընկած հաշվետու ժամանակաշրջաններին վերագրվող շահույթներից բաշխվող շահաբաժինների վրա: Միաժամանակ, սահմանվել է, որ 15% դրույքաչափը կիրառվում է նաև այն բաժնետիրոջ ստացած շահաբաժինների նկատմամբ, որին պատկանող՝ համապատասխան բանկի ցուցակված բաժնետոմսերի անվանական արժեքը շահաբաժինների վճարման օրվա դրությամբ գերազանցում է բանկի ընդհանուր ցուցակված բաժնետոմսերի անվանական արժեքի 1%-ը:
- Ամսական հաշվարկի լրացման կարգում սահմանվել է կրիպտոակտիվների օտարումից ստացվող եկամուտների առանձին տեսակ, որը ներառում է էությամբ եզակի և փոխարինելի չհամարվող կրիպտոակտիվների, ինչպես նաև ապակենտրոնացված գրանցամատյանի պահպանման կամ գործարքների վավերացման արդյունքում ավտոմատ կերպով որպես պարգևատրում ստեղծված կրիպտոակտիվների օտարումից ստացվող եկամուտները: Նշված եկամուտների համար սահմանվել են 008.1 և 108.1 կոդերը՝ 1% դրույքաչափով:
- Ամսական հաշվարկում և համապատասխան եկամտի կոդերի աղյուսակներում նախատեսվել է կառավարման հանձնված անշարժ գույքի հետ կապված գործարքներից ստացվող եկամուտների առանձին արտացոլում: Այդ եկամուտները սահմանվել են որպես «Ռիելթորական գործունեության մասին» օրենքի իմաստով անշարժ գույքի սեփականատիրոջ կողմից կառավարման հանձնված գույքի հետ կապված գործարքներից ստացվող եկամուտներ: Դրանց համար նախատեսվել են 014.1 և 114.1 կոդերը՝ 10% դրույքաչափով:
- Եկամտային հարկի տարեկան հաշվարկի (հայտարարագրի) ձևը լրացվել է նոր տողով (3.18.1), որում նախատեսվում է արտացոլել կառավարման հանձնված անշարժ գույքի հետ կապված գործարքներից հարկային տարվա ընթացքում ստացված եկամուտների հանրագումարի՝ 60 միլիոն դրամը գերազանցող մասը՝ 10% դրույքաչափով: Նշված եկամուտների հանրագումարում ներառվում են նաև հարկային գործակալներից ստացված համապատասխան եկամուտները:
- Համապատասխան փոփոխություններ են կատարվել նաև եկամուտների կոդերի աղյուսակներում՝ նախատեսելով շահաբաժինների համար 5%, 10% և 15% դրույքաչափերի արտացոլման հնարավորություն՝ ըստ կիրառելի կարգավորման:

- Կրիպտոակտիվների օտարումից ստացվող եկամուտների վերաբերյալ լրացումներն ուժի մեջ են մտնում 2026 թվականի դեկտեմբերի 1-ից, իսկ կառավարման հանձնված անշարժ գույքից ստացվող եկամուտների և դրանց տարեկան հայտարարագրման վերաբերյալ լրացումները՝ 2027 թվականի հունիսի 1-ից:

2021 թվականի մայիսի 27-ի N 883-Ն որոշման մեջ լրացումներ կատարելու մասին N 1316-Ն (ընդունվել է՝ 03.09.2026, ուժի մեջ է մտնում «Մաքսային կարգավորման մասին» օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» 2026 թվականի մարտի 4-ի ՀՕ-84-Ն օրենքի ուժի մեջ մտնելու օրվանից)

- N 883-Ն որոշմամբ սահմանված են մաքսային մարմիններին վճարվող մաքսատուրքի, հարկերի, տուրքերի, տոկոսների, տույժերի և տուգանքների վճարման եղանակները, վճարման միջոցները և վճարման պահը: Լրացումներով այս կանոնները տարածվում են նաև էլեկտրոնային առևտրի ապրանքների համար վճարվող մաքսատուրքի և հարկերի վրա: Արդյունքում էլեկտրոնային առևտրի միջոցով ձեռք բերված ապրանքների համար մաքսային վճարների կատարումը կկարգավորվի նույն ընդհանուր կանոններով, ինչ մյուս մաքսային վճարներինը:

Կառավարության 2018 թվականի ապրիլի 12-ի N 402-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին N 1332-Ն (ընդունվել է՝ 11.09.2026, ուժի մեջ՝ 12.09.2026)

- Որոշմամբ ուժը կորցրած է ճանաչվել ՀՀ կառավարության 2018 թվականի ապրիլի 12-ի N 402-Ն որոշումը, որով սահմանվում էր, որ համայնքին նվիրատվության ձևով ապրանքների մատակարարման գործարքների դեպքում ավելացված արժեքի հարկով հարկման բազան համարվում է 0 դրամ:
- Որոշման ուժը կորցրած ճանաչելը պայմանավորված է ՀՀ հարկային օրենսգրքում կատարված փոփոխություններով, որոնց համաձայն՝ 2026 թվականի հուլիսի 1-ից համայնքին նվիրատվության ձևով ապրանքների մատակարարման գործարքներն ազատված են ԱԱՀ-ից:

ՀՀ կառավարության 2026 թվականի սեպտեմբերի 11-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի փետրվարի 28-ի N 201-L որոշման մեջ լրացումներ կատարելու մասին» N 1338-L որոշում (ընդունվել է 11.09.2026 թ., ուժի մեջ՝ 12.09.2026 թ.):

- Որոշմամբ փոփոխություններ են կատարվել գյուղատնտեսական հումքի մթերումների (գնումների) նպատակով տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման ծրագրում, որոնց համաձայն՝
- 2026 թվականի սեպտեմբերի 15-ից մինչև դեկտեմբերի 30-ը խաղողի մթերման նպատակով տրամադրվող վարկերի ապահովման միջոցների անբավարարության դեպքում տնտեսավարողներին կարող է տրամադրվել վարկի մինչև 50%-ի չափով բյուջետային երաշխիք, սակայն ոչ ավելի, քան 2025 թվականին արտահանված արտադրանքի արժեքը:
- Ծրագրի շրջանակներում 2024 և 2025 թվականներին տրամադրված վարկերի համար ֆինանսական կառույցների և շահառուների փոխադարձ համաձայնությամբ կարող է մինչև 6 ամսով երկարաձգվել վարկի մայր գումարի մարման արտոնյալ ժամկետը, ինչպես նաև մինչև 6 ամսով՝ վարկի մարման ժամկետը: Յուրաքանչյուր վարկառու կարող է օգտվել այդ հնարավորությունից միայն 2024 կամ միայն 2025 թվականին տրամադրված վարկերի մասով:
- Վարկերի մարման ժամկետների երկարաձգումը չի հանգեցնում դրանց շրջանակներում տրամադրված բյուջետային երաշխիքների գործողության ժամկետների երկարաձգման: Նշված հնարավորությունները նախատեսված են 2026 թվականի սեպտեմբերի 15-ից մինչև դեկտեմբերի 30-ն ընկած ժամանակահատվածի համար:

ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԿՈՄՂԻՑ ՀԱՎԱՆՈՒԹՅԱՆ ԱՐԺԱՆԱՑԱԾ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԵՐ ԵՎ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՏԵՐ

«Հայաստանի Հանրապետության և Իրանի Իսլամական Հանրապետության տարածքներով տեղափոխվող ապրանքների և տրանսպորտային միջոցների վերաբերյալ նախնական տեղեկատվության փոխանակման կազմակերպման մասին («Պարզեցված մաքսային միջանցք»)» արձանագրության նախագծի ստորագրման առաջարկությանը հավանություն տալու մասին N 1297-Ա որոշում (ընդունվել է՝ 03.09.2026 թ., ուժի մեջ՝ 04.09.2026 թ.)

- Հավանություն արժանացած արձանագրության նախագծով նախատեսվում է, որ «Պարզեցված մաքսային միջանցքի» կիրառման նպատակով Կողմերը, մինչ ապրանքների և տրանսպորտային միջոցների՝ մյուս Կողմի պետության տարածք մուտք գործելը, էլեկտրոնային եղանակով տեղեկություններ են փոխանակելու ապրանքների, տրանսպորտային միջոցների և արտաքին տնտեսական գործունեության մասնակիցների, այդ թվում՝ բեռնափոխադրողների և նրանց աշխատակիցների (նախագծում՝ Սուբյեկտներ) վերաբերյալ՝ արձանագրությամբ սահմանվող պայմաններին համապատասխան: «Պարզեցված մաքսային միջանցքը» նախատեսվում է կիրառել այն Սուբյեկտների նկատմամբ, որոնց գործունեությունը բնորոշվում է մաքսային օրենսդրության խախտման ցածր ռիսկայնությամբ: Պարզեցումները կիրառվելու են բոլոր տեսակի տրանսպորտային միջոցների, բացառությամբ անձնական օգտագործման տրանսպորտային միջոցների, և բոլոր տեսակի ապրանքների համար՝ հայաստանյան և իրանական այն Սուբյեկտների նկատմամբ, որոնք կօգտվեն «Պարզեցված մաքսային միջանցքից» կամավորության սկզբունքով:
- Որոշման հիմնավորման մեջ նշված է նաև, որ Պարզեցված մաքսային միջանցքի» լիարժեք ներդրումը հնարավոր կլինի Մեղրիի սահմանային անցման կետում ընթացող շինարարության ավարտից հետո:

«Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծին հավանություն տալու N 1358-Ա մասին (ընդունված՝ 17.09.2026 թ., ուժի մեջ՝ 18.09.2026 թ.):

- Օրենքի նախագծով առաջարկվում է ընդլայնել ՀՀ հարկային օրենսգրքով սահմանված սոցիալական ծախսերի շրջանակը՝ նախատեսելով ֆիզիկական անձանց կողմից վճարված եկամտային հարկի հաշվին հասարակական կազմակերպություններին, լրատվական գործունեություն իրականացնող իրավաբանական անձանց (անհատ ձեռնարկատերերին) և կուսակցություններին անհատույց դրամական հատկացումներ կատարելու հնարավորություն: Մասնավորապես՝
- Առաջարկվում է սոցիալական ծախսերի շարքին դասել ոչ միայն ֆիզիկական անձի կողմից իր և իր ընտանիքի անդամների համար կատարված առողջապահության, կրթության և բնակարանային ապահովության ծախսերը, այլև հարկային տարվա համար հասարակական կազմակերպություններին, լրատվական գործունեություն իրականացնող իրավաբանական անձանց (անհատ ձեռնարկատերերին) և կուսակցություններին եկամտային հարկի հաշվին անհատույց հատկացվող դրամական միջոցները:
- Նախատեսվում է, որ սոցիալական ծախսերի փոխհատուցման կամ հատկացման առավելագույն չափերը, համապատասխան կազմակերպությունների շրջանակը, դրանց ներկայացվող չափանիշները, հարկային

մարմին ներկայացվող տեղեկությունների ցանկը, ինչպես նաև դրանց ներկայացման և հրապարակման կարգը սահմանվելու են ՀՀ կառավարության կողմից:

- Առաջարկվում է սահմանել, որ սոցիալական ծախսերի փոխհատուցումը (վերադարձը) կամ հատկացումը կատարվում է ֆիզիկական անձի հաշվարկված և (կամ) վճարված եկամտային հարկի գումարից՝ ՀՀ կառավարության սահմանած կարգով: Ընդ որում, նշված հնարավորությունից օգտվելու պայման է հանդիսանալու եկամտային հարկի տարեկան հաշվարկը (հայտարարագիրը) էլեկտրոնային ստորագրությամբ վավերացված ներկայացնելը հարկային մարմին:
- Նախագծով նախատեսվում է, որ նոր կարգավորումները կիրառվելու են 2026 թվականի և դրան հաջորդող հարկային տարիների համար հաշվարկված և (կամ) վճարված եկամտային հարկի հաշվին կատարվող անհատույց դրամական հատկացումների նկատմամբ:
- Օրենքի նախագծից բխող ենթաօրենսդրական ակտերը պետք է ընդունվեն օրենքի ընդունումից հետո եռամսյա ժամկետում:

2026 թվականի պետական ստանդարտացման ծրագիրը և ստանդարտացման աշխատանքների ցանկը հաստատելու N 1376-L մասին (ընդունված՝ 24.09.2026թ., ուժի մեջ՝ 25.09.2026 թ.):

- Որոշմամբ հաստատվել են 2026 թվականի պետական ստանդարտացման ծրագիրը և ստանդարտացման աշխատանքների ցանկը, որոնցով նախատեսվում է միջազգային և տարածաշրջանային ստանդարտներին ներդաշնակ ազգային ստանդարտների մշակում, գործող ստանդարտների արդիականացում, միջազգային ստանդարտացման գործընթացներին մասնակցություն և ստանդարտների ազգային ֆոնդի զարգացում Մասնավորապես՝
- Սննդամթերքի անվտանգության ոլորտում նախատեսվում է մշակել ԻՍՕ 22003-1 և ԻՍՕ 22003-2 միջազգային ստանդարտներին ներդաշնակ ազգային ստանդարտներ, որոնք կսահմանեն սննդամթերքի անվտանգության կառավարման համակարգերի աուդիտ և սերտիֆիկացում իրականացնող մարմիններին, ինչպես նաև արտադրանքի, գործընթացների և ծառայությունների գնահատման ու սերտիֆիկացմանը ներկայացվող պահանջները:
- Շրջակա միջավայրի պահպանության ոլորտում նախատեսվում է մշակել ԻՍՕ 21675 միջազգային ստանդարտին ներդաշնակ ազգային ստանդարտ՝ ջրում պերֆտորալկիլային և պոլիֆտորալկիլային նյութերի (PFAS) որոշման մեթոդների վերաբերյալ: Նշված ստանդարտի մշակումը պայմանավորված է նաև խմելու ջրի սանիտարական նոր պահանջներով, որոնց շրջանակներում PFAS նյութերի հետազոտությունը 2027 թվականի հունվարի 1-ից ներառվելու է պարտադիր հետազոտության ենթակա ցուցանիշների ցանկում:
- Երկրատարածական տվյալների ոլորտում նախատեսվում է մշակել ԻՍՕ 19108, ԻՍՕ 19110 և ԻՍՕ 19118 միջազգային ստանդարտներին ներդաշնակ ազգային ստանդարտներ՝ աշխարհագրական տեղեկատվության ժամանակային սխեմաների, տարածական օբյեկտների քարտացուցակավորման մեթոդաբանության և կոդավորման վերաբերյալ: Նշված աշխատանքները նպատակ ունեն ապահովելու տարածական տվյալների ճշգրտությունը, հուսալիությունը և համադրելիությունը:
- Ռազմարդյունաբերության ոլորտում նախատեսվում է մշակել ռազմական ստանդարտ՝ ոլորտի աշխատանքների կարգավորման և բարելավման նպատակով:
- Նախատեսվում է շարունակել ՀՀ մասնակցությունը միջազգային, եվրոպական, միջպետական և ԵԱՏՄ ստանդարտացման գործընթացներին, այդ թվում՝ համապատասխան տեխնիկական հանձնաժողովների աշխատանքներին,

միջազգային և միջպետական ստանդարտների նախագծերի փորձաքննությանը և էլեկտրոնային քվեարկությանը:

- Նախատեսվում է իրականացնել ստանդարտների ազգային ֆոնդի համալրման, հաշվառման և արդիականացման աշխատանքներ, ինչպես նաև զարգացնել ստանդարտների էլեկտրոնային տվյալների բազան, ապահովել գործող ստանդարտների ամբողջական տեքստերի պահպանումը և դրանց վերաբերյալ տեղեկատվական սպասարկումը:
- Որոշմամբ նախատեսված աշխատանքների հիմնական նպատակն է բարձրացնել ազգային արտադրանքի որակը և մրցունակությունը, նվազեցնել միջազգային առևտրում տեխնիկական խոչընդոտները և ապահովել ազգային ստանդարտների համապատասխանությունը միջազգային ու տարածաշրջանային պահանջներին:

ՈՒԺԻ ՄԵՋ ՄՏԱԾ ՕՐԵՆՔՆԵՐ ԵՎ ԱՅԼ ԵՆԹԱՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ԱԿՏԵՐ

«Պետական տուրքի մասին» օրենքում լրացում և փոփոխություններ կատարելու մասին ՀՕ-8-Ն օրենք (ընդունված՝ 20.01.2026 թ., ուժի մեջ՝ 01.09.2026 թ.):

- Ուժի մեջ են մտել Օրենքում ապրանքների բացթողմանն ուղղված մաքսային գործառնությունների իրականացման համար սահմանված պետական տուրքերի փոփոխությունները
- Սահմանվել են մեկ ապրանքային հայտարարագրով հայտարարագրվող ապրանքների բացթողմանն ուղղված մաքսային գործառնությունների համար պետական տուրքի տարբերակված դրույքաչափեր՝ կախված ապրանքների բրուտտո քաշից: Մասնավորապես՝
- մինչև 3 տոննա ներառյալ՝ բազային տուրքի 7-ապատիկի չափով,
- 3 տոննայից ավելի մինչև 10 տոննա ներառյալ՝ բազային տուրքի 13-ապատիկի չափով,
- 10 տոննայից ավելի մինչև 25 տոննա ներառյալ՝ բազային տուրքի 18-ապատիկի չափով,
- 25 տոննայից ավելի մինչև 60 տոննա ներառյալ՝ բազային տուրքի 24-ապատիկի չափով,
- 60 տոննայից ավելի՝ բազային տուրքի 35-ապատիկի չափով:
- Ուժը կորցրած է ճանաչվել օրենքի 19.9-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետը, և համապատասխան փոփոխություններ են կատարվել նույն հոդվածի 3-րդ կետում՝ պետական տուրքի կիրառման բացառությունների շրջանակը ճշգրտելու նպատակով:
- Հստակեցվել է, որ 19.9-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով նախատեսված կարգավորումը չի տարածվում ապրանքները ժամանման վայրի մաքսային մարմնից մինչև ներքին մաքսային մարմին տեղափոխելու նպատակով հայտարարագրման դեպքերի վրա:

«Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՕ-309-Ն օրենք (ընդունված՝ 03.07.2026 թ., առանձնացված դրույթներն ուժի մեջ են մտել՝ 01.09.2026 թ.):

- 2026 թվականի սեպտեմբերի 1-ից ուժի մեջ են մտել ՀՀ հարկային օրենսգրքում կատարված փոփոխությունները, որոնցով վերանայվել են հաշվարկային փաստաթղթերի և բեռնագրերի դուրսգրման ժամկետները, ինչպես նաև հստակեցվել են հսկիչ դրամարկղային մեքենաների կիրառման և ՀԴՄ կտրոնների տրամադրման հետ կապված առանձին պահանջներ: Մասնավորապես՝

- Սահմանվել է, որ հաշվարկային փաստաթղթերը, բացառությամբ ՀՀ հարկային օրենսգրքի 56-րդ հոդվածի 8-րդ և 8.1-ին մասերով նախատեսված դեպքերի, պետք է դուրս գրվեն մինչև ապրանքի մատակարարումը: Այսպիսով, ապրանքների մատակարարման դեպքում հաշվարկային փաստաթղթի դուրսգրումը պետք է նախորդի համապատասխան մատակարարմանը:
- Աշխատանքների կատարման և ծառայությունների մատուցման դեպքում նախատեսվել է, որ հաշվարկային փաստաթղթերը պետք է դուրս գրվեն աշխատանքի կատարումն ավարտելու կամ ծառայության մատուցումն ավարտելու պահին: Ընդ որում, եթե պայմանագրով նախատեսված է աշխատանքների կատարում կամ ծառայությունների մատուցում առանձին փուլերով, հաշվարկային փաստաթղթերը դուրս են գրվում նաև համապատասխան փուլերի ավարտի պահին:
- Առանձին կարգավորմամբ սահմանվել է, որ բեռնագիրը պետք է դուրս գրվի մինչև ապրանքի տեղափոխությունը: Այսպիսով, հաշվարկային փաստաթղթերի և բեռնագրերի դուրսգրման ժամկետները տարանջատվել են՝ հաշվի առնելով համապատասխան փաստաթղթերի նշանակությունը և դրանցով փաստաթղթավորվող գործառնությունների առանձնահատկությունները:
- Հստակեցվել է հսկիչ դրամարկղային մեքենա կիրառող կազմակերպությունների, անհատ ձեռնարկատերերի և նոտարների՝ ՀԴՄ կտրոն տրամադրելու պարտավորությունը: Մասնավորապես, սահմանվել է, որ կանխիկ դրամով, վճարային քարտերով կամ վճարային տեխնոլոգիաների հիման վրա կիրառվող այլ վճարային գործիքների միջոցով դրամական հաշվարկներ իրականացնելիս նրանք պարտավոր են ապրանք ձեռք բերողին, աշխատանք ընդունողին կամ ծառայություն ստացողին տրամադրել ՀԴՄ կտրոն:
- ՀԴՄ կտրոն տրամադրելու պարտավորությունը վերաբերում է նշված վճարման եղանակներով իրականացվող դրամական հաշվարկներին՝ անկախ նրանից, թե վճարումն իրականացվում է կանխիկ դրամով, վճարային քարտով, թե վճարային տեխնոլոգիաների հիման վրա կիրառվող այլ վճարային գործիքով:

«Հայաստանի Հանրապետության ընդերքի մասին օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՕ-317-Ն օրենք (ընդունված՝ 03.07.2026 թ., ուժի մեջ՝ 01.09.2026 թ.):

- Ուժի մեջ են մտել ՀՀ ընդերքի մասին օրենսգրքում կատարված փոփոխությունները, որոնցով վերանայվել են իրավաբանական և ֆիզիկական անձանց սեփական հողամասերի սահմաններում առանց ընդերքօգտագործման իրավունքի ձևավորման ոչ մետաղական օգտակար հանածոների արդյունահանման պայմանները՝ հստակ տարանջատելով սեփական կարիքների բավարարման և շահույթ ստանալու նպատակով իրականացվող աշխատանքները: Մասնավորապես՝
- Սահմանվել է, որ իրավաբանական և ֆիզիկական անձինք կարող են իրենց սեփական հողամասերի սահմաններում, առանց ընդերքօգտագործման իրավունքի ձևավորման, իրականացնել պետական հաշվեկշռում չհաշվառված ոչ մետաղական օգտակար հանածոների արդյունահանում՝ Կառավարության սահմանած կարգով այդ մասին տեղյակ պահելով լիազոր մարմնին և առանց հորատապայթեցման աշխատանքների կիրառման:
- Սեփական տնտեսական և կենցաղային կարիքների բավարարման նպատակով, առանց շահույթ ստանալու նպատակի, թույլատրվել է իրականացնել արդյունահանման աշխատանքներ մինչև 2 մետր խորությամբ, ինչպես նաև ստորերկրյա կառույցների շինարարություն՝ մինչև 5 մետր խորությամբ:
- Նախատեսվել է շահույթ ստանալու նպատակով պինդ ոչ մետաղական օգտակար հանածոների արդյունահանման հնարավորություն՝ օրացուցային տարվա

ընթացքում առավելագույնը 20 խորանարդ մետր ծավալով՝ պահպանելով օրենքով սահմանված մյուս պայմանները:

- Առանձին կարգավորում է նախատեսվել բազմաբնակարան շենքերի և հասարակական շինությունների կառուցման դեպքերի համար: Նման շինարարության ընթացքում շահույթ ստանալու նպատակով պինդ ոչ մետաղական օգտակար հանածոների արդյունահանումը թույլատրվում է օրենքով սահմանված կարգով հաստատված նախագծային փաստաթղթերում նշված խորությամբ:
- Օրենքից բխող ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտի պետք է ընդունվեն օրենքի ընդունումից եռամսյա ժամկետում:

ՀՀ կառավարության 2015 թվականի մարտի 5-ի N 219-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու և ՀՀ կառավարության 2022 թվականի փետրվարի 10-ի N 155-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին N 385-Ն որոշում (ընդունված՝ 26.03.2026 թ., ուժի մեջ՝ 26.09.2026 թ.):

- 2026 թվականի սեպտեմբերի 26-ից ուժի մեջ են մտել նիկոտին պարունակող և չպարունակող արտադրանքի անվտանգության, արտադրության, մակնշման, փաթեթավորման, շրջանառության և համապատասխանության գնահատման նոր պահանջները: Մասնավորապես, ՀՀ կառավարության 2015 թվականի մարտի 5-ի N 219-Ն որոշմամբ հաստատված «Ծխախոտի անվտանգության տեխնիկական կանոնակարգը» վերանվանվել է «Նիկոտին պարունակող և չպարունակող արտադրանքի տեխնիկական կանոնակարգ» և շարադրվել ամբողջությամբ նոր խմբագրությամբ: Միաժամանակ, ուժը կորցրած է ճանաչվել ՀՀ կառավարության 2022 թվականի փետրվարի 10-ի N 155-Ն որոշումը, որով հաստատված էր ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների անվտանգության առանձին տեխնիկական կանոնակարգը:
- Նոր տեխնիկական կանոնակարգը տարածվում է Հայաստանի Հանրապետության տարածքում շրջանառության մեջ դրվող՝ ԱՏԳ ԱԱ 2404 11 000, 2404 12 000 0, 2404 19 000 և 2404 91 000 ծածկագրերի ներքո դասվող նիկոտին պարունակող և չպարունակող արտադրանքի վրա: Կարգավորման շրջանակում ներառվում են, մասնավորապես, էլեկտրոնային նիկոտին մատակարարող համակարգերի հեղուկները, տաքացվող ծխախոտային և ոչ ծխախոտային արտադրատեսակները, ինչպես նաև առանց ծխախոտի տերևի օրալ օգտագործման նիկոտին պարունակող արտադրանքը, այդ թվում՝ նիկոտինային բարձիկները: Մասնավորապես՝
- Սահմանվել են նիկոտին պարունակող և չպարունակող արտադրանքի տարբերակման չափանիշները: Նիկոտին պարունակող արտադրանք է համարվում հեղուկ կամ գելային լցանյութում առնվազն 0.1 մգ/սմ^3, իսկ ծխախոտի տերև չպարունակող խառնուրդներում՝ առնվազն 0.01% նիկոտին պարունակող արտադրանքը, ինչպես նաև կանոնակարգով սահմանված տաքացվող ծխախոտը և օրալ օգտագործման արտադրանքը: Նիկոտին չպարունակող արտադրանքի համար նախատեսվել են համապատասխանաբար ավելի ցածր պարունակության չափանիշներ:
- Սահմանվել են արտադրանքի բաղադրությանը և անվտանգությանը ներկայացվող պահանջներ: Մասնավորապես, արգելվել է արտադրության ընթացքում որոշակի վնասակար նյութերի և բաղադրիչների օգտագործումը, այդ թվում՝ վիտամին E ացետատի, դիացետիլի, դիէտիլենգլիկոլի, էտիլենգլիկոլի, կամֆորայի, կումարինի և տեխնիկական կանոնակարգով թվարկված այլ նյութերի կիրառումը: Սահմանվել են նաև արտադրանքի օգտագործման ընթացքում առաջացող աերոզոլում արտազատվող նյութերի անվտանգության պահանջները:

- Նիկոտինի պարունակության նկատմամբ սահմանվել են առավելագույն թույլատրելի չափաքանակներ: Մասնավորապես՝
- նիկոտին մատակարարող համակարգերի հեղուկներում նիկոտինի առավելագույն պարունակությունը չպետք է գերազանցի 20 մգ/սմ^3-ը,
- օրալ օգտագործման արտադրանքում նիկոտինի պարունակությունը չպետք է գերազանցի 16.6 մգ-ը՝ արտադրանքի մեկ միավորի հաշվով,
- ծխախոտային և նիկոտին պարունակող ոչ ծխախոտային խառնուրդներում նիկոտինի զանգվածային բաժինը չպետք է գերազանցի 3.5%-ը կամ 35 մգ/գ-ը:
- Սահմանափակվել են նաև նիկոտին մատակարարող համակարգերում օգտագործվող հեղուկների ծավալները: Մասնավորապես, մեկ քարթրիջում կամ պատիճում հեղուկի ծավալը չի կարող գերազանցել 2 մլ-ը, համակարգի լիցքավորման համար նախատեսված տարողությունում՝ 10 մլ-ը, իսկ մեկանգամյա օգտագործման համակարգում՝ 2 մլ-ը: Նախատեսվել են նաև լիցքավորման տարողությունների՝ երեխաների կողմից բացվելը կանխող և հեղուկի արտահոսքը բացառող կառուցվածքային պահանջներ:
- Սահմանվել են արտադրանքի սպառողական փաթեթավորման և մակնշման պարտադիր պահանջներ: Փաթեթավորման վրա պետք է հայերենով նշվեն արտադրանքի տեսակը և անվանումը, արտադրողի ու համապատասխան պատասխանատու կազմակերպության տվյալները, լցանյութի ծավալը կամ քաշը, նիկոտինի պարունակությունը, արտադրության ամիսն ու տարին, անհրաժեշտության դեպքում՝ պիտանելիության ժամկետն ու պահպանման պայմանները, ինչպես նաև համապատասխանության ազգային նշանը: Նախատեսվել է նաև տեղեկություններ ներկայացնել այն նիկոտին մատակարարող համակարգի վերաբերյալ, որի հետ նախատեսված է օգտագործել համապատասխան արտադրանքը:
- Պարտադիր են դարձել արտադրանքի օգտագործման վնասակարության վերաբերյալ նախազգուշացումները: Նիկոտին պարունակող արտադրանքի դեպքում փաթեթավորման վրա պետք է զետեղվի նիկոտինի՝ կախվածություն առաջացնելու և առողջությանը վնաս պատճառելու վերաբերյալ նախազգուշացում, իսկ նիկոտին չպարունակող արտադրանքի դեպքում՝ առողջությանը հնարավոր վնասի վերաբերյալ նախազգուշացում: Դրանք պետք է ներկայացվեն հայերենով՝ գունավոր պատկերների կամ լուսապատկերների և տեքստի միջոցով, և զբաղեցնեն սպառողական փաթեթավորման դիմային հիմնական կողմի առնվազն 30%-ը:
- Նախատեսվել է նաև երեխաների համար անհասանելի վայրում արտադրանքը պահելու վերաբերյալ պարտադիր նշում, որը պետք է զբաղեցնի սպառողական փաթեթավորման հակառակ կողմի առնվազն 20%-ը: Միաժամանակ, փաթեթավորման վրա պետք է նշվի անչափահասներին արտադրանքի վաճառքի անթույլատրելիությունը:
- Արգելվել է արտադրանքի փաթեթավորման վրա սպառողին մոլորության մեջ գցող այնպիսի արտահայտությունների օգտագործումը, ինչպիսիք են «Նիկոտինի ցածր պարունակություն», «Թեթև», «Շատ թեթև», «Փափուկ», «Նվազ վտանգավոր» և այլ նմանատիպ ձևակերպումները, որոնք կարող են ստեղծել արտադրանքի անվտանգ կամ պակաս վնասակար լինելու տպավորություն: Սահմանափակվել է նաև սննդամթերքի, դեղամիջոցների կամ դեղաբույսերի հետ արտադրանքի ասոցացում առաջացնող պատկերների և ձևակերպումների օգտագործումը:
- Սահմանվել է, որ ՀՀ տարածքում համապատասխան արտադրանքի շրջանառության մեջ դնելը թույլատրվում է տեխնիկական կանոնակարգի պահանջներին համապատասխանելու դեպքում: Արտադրանքը պետք է ուղեկցվի համապատասխանության հայտարարագրով,

ունենա հայերեն մակնշում և համապատասխանության ազգային նշան:
- Հստակեցվել են համապատասխանության գնահատման ընթացակարգերը: Նախատեսվել է, որ համապատասխանության հայտարարագրումն իրականացվում է սերիական արտադրության կամ առանձին խմբաքանակների համար սահմանված ընթացակարգերով: Համապատասխանության հայտարարագրման հայտատու կարող են հանդիսանալ արտադրողը, նրա լիազորված անձը, մատակարարը կամ ներմուծողը (վաճառողը): Հայտատուն պարտավոր է հավաքագրել և վերլուծել համապատասխանությունը հավաստող փաստաթղթերը, իրականացնել արտադրանքի նույնականացումը և պահպանել համապատասխան փաստաթղթերի փաթեթը արտադրանքի իրացումից հետո 10 տարի:
- Սահմանվել է, որ սերիական արտադրության համար համապատասխանության հայտարարագրի գործողության ժամկետը չի կարող գերազանցել 5 տարին, իսկ առանձին խմբաքանակի դեպքում՝ արտադրանքի պահպանման ժամկետը:
- Տեխնիկական կանոնակարգի գործողությունից բացառվել են, մասնավորապես, դեղ հանդիսացող արտադրանքը, բնական նիկոտին պարունակող պարենային արտադրանքը, կանոնակարգով կարգավորվող արտադրանքի օգտագործման համար նախատեսված առանձին սարքերն ու համակարգերը, ինչպես նաև կանոնակարգով սահմանված պայմաններով արտահանման նպատակով արտադրվող արտադրանքը և որոշակի նպատակներով ներմուծվող նմուշները:

E-DRAFT ՀԱՐԹԱԿՈՒՄ ՀԱՆՐԱՅԻՆ ՔՆՆԱՐԿՄԱՆԴՐՎԱԾ ՆԱԽԱԳԾԵՐ

**«««Ավտոմոբիլային տրանսպորտով վտանգավոր բեռներ և չվնասազերծված տարաներ փոխադրելու մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», «««Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» և «««Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» օրենքների [նախագծեր](): **

- Նախագծերի փաթեթով առաջարկվում է վերանայել ավտոմոբիլային տրանսպորտով վտանգավոր բեռների փոխադրման նկատմամբ պետական վերահսկողության համակարգը՝ հստակեցնելով ՀՀ ներքին գործերի նախարարության և տրանսպորտի բնագավառում վերահսկողություն իրականացնող տեսչական մարմնի լիազորությունները, ինչպես նաև սահմանելով խախտումների ռիսկայնության գնահատման և դրանց արձագանքման միասնական կարգավորումներ:
- Մասնավորապես, նախատեսվում է վերահսկողությունն իրականացնել երկու ձևով՝ ճանապարհին ՀՀ ներքին գործերի նախարարության կողմից իրականացվող վերահսկողության և վտանգավոր բեռներ փոխադրող սուբյեկտների մոտ տեսչական մարմնի կողմից անցկացվող ստուգումների միջոցով: Ճանապարհային վերահսկողությունը պետք է իրականացվի առանց խտրականության՝ անկախ ավտոտրանսպորտային միջոցի գրանցման պետությունից, փոխադրողի գտնվելու վայրից կամ բեռի ծագման ու նշանակման վայրից: ՀՀ կառավարությանը վերապահվելու է

վերահսկողության հաճախականությունը, վայրերի և տրանսպորտային միջոցների ընտրության չափանիշները, առավելագույն տևողությունը և ստուգաթերթի ձևը սահմանելու իրավասությունը:

- Առաջարկվում է վտանգավոր բեռների փոխադրման ոլորտում խախտումները դասակարգել երեք ռիսկայնության խմբերի՝ ըստ մարդու կյանքի, առողջության և շրջակա միջավայրի համար հնարավոր հետևանքների: Առաջին՝ առավել բարձր ռիսկայնության խմբի խախտումների դեպքում նախատեսվում է արգելել տրանսպորտային միջոցի հետագա երթևեկությունը մինչև խախտման վերացումը, իսկ անհրաժեշտության դեպքում՝ այն դնել արգելանքի տակ: Երկրորդ խմբի խախտումների դեպքում նախատեսվում է պահանջել խախտման վերացում հայտնաբերման վայրում կամ, դրա անհնարինության դեպքում, ոչ ուշ, քան փոխադրման ավարտը:
- Նախատեսվում է նաև ընդլայնել ոստիկանության՝ վտանգավոր բեռներ փոխադրող տրանսպորտային միջոցները կանգնեցնելու, ստուգաթերթի հիման վրա վերահսկողություն իրականացնելու, փորձանմուշներ վերցնելու և օրենքով նախատեսված դեպքերում դրանց հետագա երթևեկությունն արգելելու լիազորությունները: Տեսչական մարմնին վերապահվելու է վերահսկողությունների և հայտնաբերված խախտումների հաշվառման, տարեկան հաշվետվությունների ներկայացման, ինչպես նաև օտարերկրյա իրավասու մարմինների հետ տեղեկատվության փոխանակման գործառույթը: Նախագծով նախատեսվում է նաև ճանաչել ԱԴՌ համաձայնագրի մասնակից պետությունների իրավասու մարմինների տրամադրած համապատասխան վկայականներն ու փաստաթղթերը:

«Տրանսպորտի մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին» և «Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում լրացում կատարելու մասին» օրենքների [նախագծեր](#):

- Նախագծերի փաթեթով առաջարկվում է ներդնել համակցված բեռնափոխադրումների իրավական կարգավորում և սահմանել փոխադրամիջոցների գույքահարկի արտոնություն՝ խրախուսելու ավտոմոբիլային տրանսպորտի հետ երկաթուղային կամ ջրային տրանսպորտի համատեղ օգտագործումը:
- Առաջարկվում է սահմանել համակցված փոխադրման հասկացությունը՝ որպես բեռների փոխադրում, որի մի հատվածն իրականացվում է ավտոմոբիլային, իսկ մյուսը՝ երկաթուղային կամ ջրային տրանսպորտով: Համակցված փոխադրում որակվելու համար նախատեսվում է, որ ոչ ավտոմոբիլային հատվածի երկարությունը պետք է գերազանցի 100 կմ-ը, իսկ ավտոմոբիլային հատվածները պետք է համապատասխանեն օրենքի նախագծով սահմանված երթուղային պայմաններին, այդ թվում՝ նավահանգստային փոխադրումների դեպքում 150 կմ շառավղի սահմանափակմանը:
- Նախատեսվում է նաև սահմանել համակցված փոխադրումների փաստաթղթավորման պահանջներ: Մասնավորապես, բեռն ուղեկցող փաստաթղթերում պետք է նշվեն երկաթուղային բեռնման և բեռնաթափման կայարանները կամ նավահանգիստները, իսկ ոչ ավտոմոբիլային հատվածի կատարումը պետք է հավաստվի համապատասխան իրավասու մարմնի ֆիզիկական կամ էլեկտրոնային դրոշմակնիքով: Առանձին դեպքերում թույլատրվում է փոխադրման համապատասխան հատվածը հիմնավորել այլ փաստաթղթով:
- Հարկային օրենսգրքում առաջարկվող լրացմամբ նախատեսվում է բեռնատար ավտոտրանսպորտային միջոցի փոխադրամիջոցների գույքահարկը նվազեցնել մեկ տոկոսային կետով՝ նախորդ հարկային տարում իրականացված յուրաքանչյուր համակցված փոխադրման համար, սակայն ոչ ավելի, քան 100

տոկոսային կետով: Արտոնությունից օգտվելու համար սեփականատերը պետք է մինչև տվյալ հարկային տարվա հունվարի 30-ը լիազոր մարմնի էլեկտրոնային համակարգի միջոցով համայնքի ղեկավարին ներկայացնի դիմում և համապատասխան հիմնավորող փաստաթղթերը:

- Նախագծերով նախատեսվում է, որ համակցված փոխադրումների վերաբերյալ տվյալների էլեկտրոնային վերլուծության և գույքահարկի արտոնության կարգավորումները ուժի մեջ կմտնեն համապատասխան էլեկտրոնային համակարգի գործարկման մասին հայտարարության հրապարակման տարվան հաջորդող տարվա հունվարի 1-ից:

«Հայաստանի Հանրապետության խաղային ոլորտի կարգավորման օպերատորի կողմից մատուցվող ծառայությունների գների առավելագույն չափերը սահմանելու մասին» ՀՀ կառավարության [որոշման նախագիծ](#):

- Նախագծով առաջարկվում է սահմանել Հայաստանի Հանրապետության խաղային ոլորտի կարգավորման օպերատորի կողմից մատուցվող ծառայությունների գների առավելագույն չափերը՝ նպատակ ունենալով կարգավորել խաղային գործունեություն իրականացնող տնտեսավարողների կողմից օպերատորին վճարվող ծառայությունների արժեքը:
- Մասնավորապես, նախատեսվում է, որ խաղային գործունեության յուրաքանչյուր տեսակի համար օպերատորին կատարվող ամսական վճարի առավելագույն չափը կազմելու է տվյալ տեսակի խաղային գործունեությունից ստացված ամսական համախառն խաղային եկամտի 1.8%-ը: Համախառն խաղային եկամուտը սահմանվում է որպես խաղերի մասնակիցների կատարած խաղադրույքների (մասնակցության վճարների) և գրանցված շահումների դրական տարբերություն:
- Միաժամանակ, առաջարկվում է սահմանել օպերատորի կողմից մատուցվող առանձին ծառայությունների գների հետևյալ առավելագույն չափերը՝ օպերացիոն վկայագրի տրամադրման համար՝ 25,000 դրամ, դրա երկարաձգման համար՝ 5,000 դրամ, իսկ շահումով խաղերի կազմակերպման համար նախատեսված մոնիթորինգի սարքերի տեղադրման համար՝ 60,000 դրամ յուրաքանչյուր սարքավորման հաշվով:
- Նախագծով նախատեսվում է, որ օպերատորը պարտավոր է իր պաշտոնական կայքում հրապարակել մատուցվող ծառայությունների գները, որոնք չեն կարող գերազանցել սահմանված առավելագույն չափերը: Բացի այդ, նույն տեսակի ծառայությունների գները չեն կարող տարբերակվել ըստ ծառայություն ստացող սուբյեկտների:
- Առաջարկվում է նաև պարտադիր դարձնել ծառայություն ստացողների հետ պայմանագրերի կնքումը՝ դրանցում հստակ սահմանելով ծառայությունների տեսակը, քանակը, պարբերականությունը, մատուցման ժամկետները, արժեքը և վճարման օրը: Նախագծի համաձայն՝ որոշումն ուժի մեջ կմտնի պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

«Խաղային գործունեության կարգավորման օպերատորի կողմից վերահսկող և լիազոր մարմիններին տեղեկատվության տրամադրման կարգը և ժամկետները սահմանելու մասին» ՀՀ կառավարության [որոշման նախագիծ:](#)

- Նախագծով առաջարկվում է սահմանել խաղային գործունեության կարգավորման օպերատորի կողմից լիազոր և վերահսկող մարմիններին խաղային գործունեության կազմակերպիչների թույլ տված խախտումների վերաբերյալ տեղեկատվության տրամադրման կարգը և ժամկետները՝ ապահովելու խաղային ոլորտում վերահսկողության արդյունավետությունն ու խախտումների ժամանակին բացահայտումը:
- Մասնավորապես, նախատեսվում է, որ օպերատորը պարտավոր է տեղեկատվություն տրամադրել ոչ միայն հաստատված

խախտումների, այլև խախտման հատկանիշներ պարունակող դեպքերի, ռիսկային վարքագծի, տվյալների անհամապատասխանությունների, տեխնիկական միջադեպերի, տեղեկատվական անվտանգության խախտումների, ինչպես նաև խաղացողների իրավունքների պաշտպանության և պատասխանատու խաղի կանոնների խախտումների վերաբերյալ: Տեղեկատվության տրամադրման ենթակա են նաև ինքնաարգելափակման ցանկում ընդգրկված անձանց մասնակցության և մոնիտորինգային կենտրոն ներկայացվող տվյալների խեղաթյուրման դեպքերը:

- Առաջարկվում է սահմանել, որ խախտում հայտնաբերելու դեպքում օպերատորը պետք է էլեկտրոնային կառավարման համակարգի միջոցով իրական ժամանակում ապահովի համապատասխան տեղեկատվության հասանելիությունը լիազոր և վերահսկող մարմիններին: Տեղեկատվությունը պետք է ներառի խախտման նկարագրությունը, այն թույլ տված կազմակերպչի տվյալները, հայտնաբերման ամսաթիվն ու ժամը, խախտման կատարման ժամանակահատվածը և այն հիմնավորող փաստաթղթերը կամ էլեկտրոնային գրառումները:
- Նախագծով նախատեսվում է, որ տեղեկատվությունը ներկայացված է համարվում էլեկտրոնային համակարգում դրա գրանցման պահից, որի վերաբերյալ համակարգը գեներացնում է գրանցման համար: Միաժամանակ, լիազոր և վերահսկող մարմինները կարող են պահանջել լրացուցիչ տեղեկություններ և փաստաթղթեր, իսկ տեղեկատվության տրամադրումը պետք է իրականացվի անձնական տվյալների պաշտպանության և տեղեկատվական անվտանգության պահանջների պահպանմամբ:
- Նախատեսվում է նաև, որ օպերատորը պարտավոր է հայտնաբերված խախտումների վերաբերյալ տեղեկատվությունը պահպանել 5 տարի: Նախագծի համաձայն՝ որոշումն ուժի մեջ կմտնի «Խաղային գործունեության կարգավորման մասին» օրենքն ամբողջությամբ գործողության մեջ դրվելու օրվանից:

«Գնումների մասին» օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» օրենքից բխող կառավարության որոշումների նախագծեր

- Նախագծով հստակեցվում են գնումների գործընթացի պատասխանատուների լիազորությունները, գնահատող հանձնաժողովների կազմավորման և որոշումների ընդունման կարգը, մասնակիցների հայտերի գնահատման պահանջները, ինչպես նաև հայտի, որակավորման և պայմանագրի ապահովումների ներկայացման ու վերադարձման պայմանները: Մասնավորապես, նախատեսվում են գնման ընթացակարգերին փոխկապակցված անձանց միաժամանակյա մասնակցության սահմանափակումներ, իրական շահառուների վերաբերյալ տեղեկությունների հրապարակման պահանջներ և պայմանագրային պարտավորությունները խախտած մասնակիցներին գնումներին մասնակցելու իրավունք չունեցող անձանց ցուցակում ընդգրկելու ընթացակարգ:
- Առանձին կարգավորումներ են առաջարկվում պետական գնումների գործընթացում արհեստական բանականության գործիքների կիրառման վերաբերյալ: Նախատեսվում է թույլատրել դրանց օգտագործումը գնումների տարբեր փուլերում, այդ թվում՝ շուկայական գների վերլուծության, հայտերի ստուգման, գնային առաջարկների համեմատության, հակամրցակցային համաձայնությունների հատկանիշների բացահայտման և պայմանագրերի կատարման մշտադիտարկման նպատակով: Միաժամանակ, հայտերի մերժման, հաղթող մասնակցի որոշման, պայմանագրի միակողմանի լուծման և այլ էական որոշումների ընդունման դեպքում արհեստական բանականության

արդյունքները պետք է ստուգվեն մարդու կողմից, իսկ որոշման պատասխանատվությունը կրի իրավասու անձը կամ մարմինը: Նախատեսվում է նաև ստեղծել կիրառվող արհեստական բանականության գործիքների հրապարակային ռեեստր և ապահովել մասնակիցների՝ դրանց կիրառման վերաբերյալ տեղեկացվածության ու արդյունքների մարդկային ստուգում պահանջելու իրավունքը: Այս կարգավորումները նախատեսվում է ուժի մեջ դնել 2028 թվականի հունվարի 1-ից: Նախագծի ընդունման դեպքում ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշումը կճանաչվի ուժը կորցրած, իսկ նոր կարգը, բացառությամբ նշված հատուկ կարգավորումների, ուժի մեջ կմտնի պաշտոնական հրապարակմանը հաջորդող տասներորդ օրը և չի տարածվի մինչ այդ սկսված ու չավարտված գնման գործընթացների և գործող պայմանագրերի վրա:

«Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1920-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության [որոշման նախագիծ:]

- Նախագծով առաջարկվում է վերանայել համայնքների գլխավոր հատակագծերի, տարածական պլանավորման փաստաթղթերի և գոտիավորման նախագծերի մշակման, համաձայնեցման, հաստատման և փոփոխման ընթացակարգերը՝ նպատակ ունենալով պարզեցնել վարչարարությունը, կրճատել համաձայնեցումների ժամկետները և բացառել անհիմն մերժումները: Մասնավորապես, նախատեսվում է, որ իրավասու մարմինների բացասական կարծիքները պետք է լինեն հստակ հիմնավորված՝ պարունակելով համապատասխան հողամասի կամ նախագծի նույնականացման տվյալները, առարկության փաստական հիմքերը և խախտված իրավական կամ նորմատիվատեխնիկական պահանջների կոնկրետ դրույթները: Չհիմնավորված բացասական կարծիքները չեն կարող ինքնուրույն հիմք հանդիսանալ նախագծի մերժման, վերադարձման կամ ընթացակարգի կասեցման համար:
- Առաջարկվում է սահմանափակել կրկնակի համաձայնեցումների և հարցումների իրականացումը: Եթե տվյալ հողամասի կամ նախագծի վերաբերյալ արդեն առկա են իրավասու մարմինների կողմից տրամադրված գործող համաձայնություններ, տեխնիկական պայմաններ կամ այլ փաստաթղթեր, դրանց կրկնակի ներկայացումը կամ նոր համաձայնեցումը չի պահանջվի, եթե չեն փոփոխվել էական փաստական հանգամանքները կամ պարտադիր իրավական պահանջները: Նախատեսվում է նաև, որ սահմանված ժամկետներում պատշաճ հիմնավորված բացասական կարծիք չներկայացնելու դեպքում համապատասխան մարմնի դիրքորոշումը ընթացակարգային նպատակներով կհամարվի դրական՝ բացառությամբ օրենքով առանձին պարտադիր համաձայնություն կամ թույլտվություն ստանալու դեպքերի:
- Նախագծով հստակեցվում և սահմանափակվում են հողամասերի գործառնական նշանակության, կառուցապատման փուլերի և գոտիավորման չափորոշիչների փոփոխությունների համաձայնեցման պահանջները: Մասնավորապես, հողամասի նպատակային նշանակությունը կամ հիմնական գոտիավորումը չփոփոխող գործառնական նշանակության փոփոխությունները, որպես կանոն, կիրականացվեն համայնքի ղեկավարի որոշմամբ: Լիազոր մարմնի նախնական համաձայնությունը կպահանջվի միայն որոշակի դեպքերում, այդ թվում՝ հատուկ կարգավորման գոտիներում, IV և V կատեգորիայի շինարարական օբյեկտների, պետական ֆինանսավորմամբ իրականացվող ծրագրերի և օրենքով նախատեսված այլ դեպքերում:

- Առանձին կարգավորում է առաջարկվում այն իրավիճակների համար, երբ համայնքի ավագանու երեք հաջորդական նիստերը չեն կայացել բացառապես անդամների կամքից անկախ, փաստաթղթավորված հանգամանքներով պայմանավորված քվորումի բացակայության պատճառով: Նման բացառիկ դեպքերում համայնքի ղեկավարը կարող է ինքնուրույն որոշում ընդունել կառուցապատման փուլերի կամ գոտիավորման առանձին չափորոշիչների փոփոխության վերաբերյալ՝ ստուգելով դիմումի համապատասխանությունը պարտադիր իրավական և քաղաքաշինական պահանջներին: Այս ընթացակարգը չի կիրառվի հողամասի նպատակային նշանակության, հիմնական գոտիավորման կամ քաղաքաշինական փաստաթղթերի հիմնական տարածական լուծումների փոփոխության նկատմամբ:
- Նախատեսվում է նաև պարզեցված ընթացակարգ սահմանել ՀՀ կառավարության որոշմամբ հաստատված պետական, պետական մասնակցությամբ կամ ներդրումային քաղաքաշինական ծրագրերում ընդգրկված հողամասերի գործառնական նշանակության փոփոխության համար: Եթե կառավարության որոշմամբ արդեն նույնականացվել են հողամասը և նախատեսվող քաղաքաշինական լուծումը, իրավասու մարմինները չեն իրականացնի ծրագրի նպատակահարմարության կրկնակի գնահատում: Նախատեսված դեպքերում լիազոր մարմինը համաձայնություն կամ պատճառաբանված մերժում պետք է տրամադրի առավելագույնը 7 աշխատանքային օրվա ընթացքում՝ նախագծով սահմանված պայմանների պահպանմամբ:
- Միաժամանակ, առաջարկվում է հստակեցնել համաձայնեցումների ժամկետները, սահմանափակել ժամկետանց առարկությունների ներկայացման հնարավորությունը և ապահովել էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության կիրառումը: Մասնավորապես, առանձին հողամասերի փոփոխությունների վերաբերյալ կարծիքների և անհրաժեշտ տեղեկությունների ստացման ընդհանուր տևողությունը, նախատեսված բացառություններով, չի կարող գերազանցել 30 օրացուցային օրը:

«Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի հոկտեմբերի 5-ի N 1257-Ն որոշման մեջ լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության [որոշման նախագիծ:]

- Նախագծով առաջարկվում է փոփոխություններ կատարել հաշվարկային փաստաթղթերի դուրսգրման, անվավեր ճանաչման և չեղարկման կարգերում՝ հստակեցնելով ապրանքների վերադարձի փաստաթղթավորման և չեղարկված հարկային հաշիվների փոխարեն նոր հարկային հաշիվների դուրսգրման ընթացակարգերը:
- Մասնավորապես, նախատեսվում է հստակեցնել, որ ՀԴՄ կտրոնով ձեռք բերված ապրանքի վերադարձի դեպքում, ՀՀ հարկային օրենսգրքով սահմանված կարգով, տրամադրվում է ՀԴՄ-ի վերադարձի կտրոն:
- Միաժամանակ, առաջարկվում է սահմանել, որ ՀՀ հարկային օրենսգրքի 56-րդ հոդվածի 10-րդ մասի 4-6-րդ կետերով նախատեսված դեպքերում նույն գործարքի մասով չեղարկված հարկային հաշվի փոխարեն նոր հարկային հաշիվ կարող է դուրս գրվել միայն նախորդ հարկային հաշիվը սահմանված կարգով չեղարկված համարվելուց հետո: Նոր հարկային հաշվում պարտադիր պետք է նշվեն չեղարկված հաշվի սերիան, համարը և դուրսգրման ամսաթիվը, ինչպես նաև պահպանվեն սկզբնական հաշվում նշված ապրանքների մատակարարման, աշխատանքների կատարման կամ ծառայությունների մատուցման ամսաթիվը, ապրանքների անվանացանկն ու քանակը կամ աշխատանքների և ծառայությունների տեսակն ու ծավալը՝ անկախ նոր հարկային հաշվի դուրսգրման ամսաթվից:

- Նախագծի համաձայն՝ որոշումն ուժի մեջ կմտնի 2027 թվականի հունվարի 1-ից:

«Հարկային մարմնում հաշվառված՝ Հայաստանի Հանրապետությունում մշտական հաստատություն չունեցող ոչ ռեզիդենտ կազմակերպության կամ անհատ ձեռնարկատիրոջ հաշվառումից հանելու կարգը սահմանելու մասին» ՀՀ կառավարության [որոշման նախագիծ:]

- Նախագծով առաջարկվում է սահմանել Հայաստանի Հանրապետությունում մշտական հաստատություն չունեցող և հարկային մարմնում հաշվառված ոչ ռեզիդենտ կազմակերպությունների, ինչպես նաև էլեկտրոնային հարթակ շահագործող՝ ԵՏՄ անդամ այլ պետությունների կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի հարկային հաշվառումից հանելու միասնական ընթացակարգ:
- Մասնավորապես, նախատեսվում է, որ հաշվառումից հանելու համար դիմումը պետք է ներկայացվի բացառապես էլեկտրոնային եղանակով՝ Պետական եկամուտների կոմիտեի ոչ ռեզիդենտ ԱԱՀ վճարողների էլեկտրոնային ԱԱՀ (e-VAT) համակարգի միջոցով: Դիմումում հարկ վճարողի հաշվառման տվյալները կլրացվեն ինքնաշխատ եղանակով, իսկ անհրաժեշտության դեպքում հնարավոր կլինի կցել լրացուցիչ փաստաթղթեր:
- Նախագծով սահմանվում է, որ հարկային մարմինը դիմումը ստանալու օրվան հաջորդող մեկ աշխատանքային օրվա ընթացքում պարտավոր է միասնական էլեկտրոնային գրանցամատյանում կատարել հաշվառումից հանելու վերաբերյալ գրառում կամ մերժել դիմումը: Մերժման հիմք է հանդիսանալու դիմումը ներկայացնելու օրվա դրությամբ ԱԱՀ-ի գծով կատարման ենթակա հարկային պարտավորությունների առկայությունը: Այդ պարտավորությունները կատարելուց հետո հարկ վճարողը կարող է ներկայացնել նոր դիմում, որի հիման վրա հաշվառումից հանելու գործընթացը կիրականացվի նույն ժամկետում:
- Նախատեսվում է նաև, որ հաշվառումից հանելու կամ դիմումը մերժելու վերաբերյալ հարկ վճարողը կծանուցվի էլեկտրոնային եղանակով: Հարկային հաշվառումից հանված լինելու պահ է համարվելու միասնական էլեկտրոնային գրանցամատյանում համապատասխան գրառում կատարելու օրը:
- Նախագծի համաձայն՝ որոշումն ուժի մեջ կմտնի դրա կիրարկումն ապահովող համապատասխան ծրագրային ապահովման աշխատանքների ավարտի օրվան հաջորդող տասներորդ օրը:

«Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության [որոշման նախագիծ:]

- Առաջարկվում է փոփոխություններ և լրացումներ կատարել ինքնակամ կառույցների օրինականացման կարգում՝ սահմանելով ֆիզիկական և իրավաբանական անձանց սեփականության իրավունքով պատկանող հողամասերում գտնվող ամբողջությամբ ինքնակամ կառույցների, այդ թվում՝ կիսակառույց շինությունների օրինականացման հատուկ ընթացակարգ: Նոր կարգավորումները չեն տարածվելու պետական կամ համայնքային հողամասերում ամբողջությամբ կամ մասամբ գտնվող կառույցների վրա:
- Մասնավորապես, նախատեսվում է, որ ինքնակամ կառույցի օրինականացման գործընթացը սկսելու համար դիմողը պետք է ստանա համայնքի ղեկավարի գրավոր նախնական գնահատականը, կառույցի տեխնիկական վիճակի վերաբերյալ դրական մասնագիտական եզրակացությունը և Քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի՝ հակահրդեհային պահանջներին համապատասխանության վերաբերյալ դրական եզրակացությունը: Կիսակառույց շինությունների դեպքում լրացուցիչ պետք է ներկայացվի հետագա կառուցապատման էսքիզային նախագիծը և դրա իրականացման

տեխնիկական հնարավորության գնահատականը: Համայնքի ղեկավարը և տեսչական մարմինը համապատասխան գնահատականներն ու եզրակացությունները տրամադրելու են առավելագույնը 30-օրյա ժամկետում:

- Առաջարկվում է սահմանել, որ օրինականացման ենթակա կառույցների հատուկ ցանկում ընդգրկվելու համար դիմումները պետք է ներկայացվեն ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն մինչև 2027 թվականի դեկտեմբերի 30-ը: Նախարարությունը ստուգելու է ներկայացված փաստաթղթերի համապատասխանությունը և կազմելու է Կառավարության հաստատմանը ներկայացվող ցանկը: Նախատեսվում է ցանկը Կառավարություն ներկայացնել մինչև 2028 թվականի հունվարի 10-ը, իսկ հաստատել՝ մինչև 2028 թվականի փետրվարի 20-ը:
- Կառավարության հաստատած ցանկում ընդգրկվելուց հետո հողամասի սեփականատերը կարող է համայնքի ղեկավարին ներկայացնել կառույցի օրինականացման դիմում: Համայնքի ղեկավարը հինգ աշխատանքային օրվա ընթացքում տեղեկացնելու է վճարման ենթակա տեղական տուրքի չափի կամ դրանից ազատվելու հիմքի մասին, իսկ առավելագույնը 30-օրյա ժամկետում ընդունելու է օրինականացման կամ մերժման մասին որոշում: Օրինականացումը կարող է մերժվել, մասնավորապես, անվտանգության և քաղաքաշինական պարտադիր պահանջների խախտման, անհրաժեշտ փաստաթղթերի բացակայության, երրորդ անձանց իրավունքների խախտման կամ տեղական տուրքը չվճարելու հիմքերով:
- Նախագծով հստակեցվում է նաև, որ կիսակառույց շինության առկա հատվածի օրինականացումը ինքնին իրավունք չի տալիս շարունակելու շինարարությունը: Հետագա կառուցապատման համար անհրաժեշտ են օրենքով սահմանված կարգով համաձայնեցված նախագծային փաստաթղթեր և շինարարության թույլտվություն: Միաժամանակ, կառույցի հաշվառումը կամ Կառավարության հաստատած ցանկում ընդգրկվելն ինքնին սեփականության իրավունքի պետական գրանցման հիմք չէ. դրա համար անհրաժեշտ է համայնքի ղեկավարի օրինականացման որոշումը:
- Նախատեսվում է, որ սկզբնական փուլում դիմումները կներկայացվեն թղթային եղանակով, իսկ համապատասխան էլեկտրոնային համակարգի գործարկումից հետո գործընթացը կիրականացվի էլեկտրոնային եղանակով: Նախագծի համաձայն՝ որոշումն ուժի մեջ կմտնի պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

«Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի սեպտեմբերի 17-ի N 1118-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության [որոշման նախագիծ:]

- Նախագծով առաջարկվում է փոփոխություններ կատարել գերակա ոլորտներում իրականացվող ներդրումային ծրագրերի շրջանակներում ներմուծվող տեխնոլոգիական սարքավորումների, դրանց բաղկացուցիչ և համալրող մասերի, հումքի ու նյութերի նկատմամբ ներմուծման մաքսատուրքից ազատման արտոնության տրամադրման կարգում՝ վերանայելով արտոնության կիրառման պայմանները, հայտերի քննարկման ժամկետները և հաշվետվողականության պահանջները:
- Մասնավորապես, նախատեսվում է, որ արտոնությունը կարող է չկիրառվել այն ապրանքների նկատմամբ, որոնք հայտի ներկայացման պահին համարվում են ՀՀ տնտեսության համար զգայուն կամ որոնց նմանատիպ ապրանքների ներմուծման նկատմամբ տնտեսական քաղաքականության շրջանակներում սահմանված են սահմանափակումներ: Միաժամանակ, նախատեսվում է կրճատել հայտերի

քննարկման առանձին ժամկետները, իսկ մերժման հիմքերի կամ ներմուծվող ապրանքների ցանկը փոփոխելու անհրաժեշտության դեպքում հայտատուին տրամադրել 5 աշխատանքային օր համապատասխան թերությունները վերացնելու համար:

- Նախագծով առաջարկվում է ընդլայնել արտոնության տրամադրումը մերժելու հիմքերը: Մասնավորապես, նախատեսվում է մերժման հիմք համարել հայտատուի, իսկ լիզինգով ներմուծման դեպքում՝ նաև լիզինգատու կազմակերպության ժամկետանց հարկային կամ մաքսային պարտավորությունների առկայությունը, եթե դրանք սահմանված ժամկետում չեն վերացվել: Բացի այդ, արտոնության տրամադրումը կարող է մերժվել, եթե հայտատուն նախկինում ստացած արտոնության շրջանակներում ստանձնած ներդրումների ծավալի կամ ստեղծված աշխատատեղերի ցուցանիշների պարտավորություններից ունեցել է 20% բացասական շեղում՝ ծրագրի ավարտական հաշվետվության տվյալներով:
- Միաժամանակ, առաջարկվում է պարզեցնել ներդրումային ծրագրերի հաշվետվողականությունը՝ կիսամյակային և տարեկան հաշվետվությունների փոխարեն նախատեսելով միայն տարեկան հաշվետվությունների ներկայացում՝ մինչև հաշվետու տարվան հաջորդող տարվա մարտի 31-ը: Հստակեցվում են նաև լիզինգով ներմուծվող ապրանքների փաստաթղթավորման պահանջները և արտոնությունից օգտվող ապրանքների ցանկի լրացման պայմանները:
- Նախագծի համաձայն՝ որոշումն ուժի մեջ կմտնի պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից և չի տարածվի մինչև դրա ուժի մեջ մտնելը ՀՀ էկոնոմիկայի նախարարություն ներկայացված հայտերի վրա: